



1999 J-17

ՀՈՅԵ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆ

ՕՏԱՐՆԵՐԻ ԱՇՔՈՒՄ

ՀՐԱՊԱՐԱԿԱԿԱՆ ԴԱՍԱԽՈՍՈՒԹԻՒՆ ԸՆԹԵՐՑՈՒԱՆ
ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆՈՒՄ ՄԱՅԻՍԻ 17-ԻՆ 1879 թ.

ԱԲԳԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

LGA

1124

ԹԻՖԼԻՍ
ՅԱՐՏԻՐՈՒԵԱՆՑԻ ՏՊԱՐԱՆ

1881

ՀԱՅԼ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԼ ՕՏԱՐՆԵՐԻ ԱԶԳՈՒՄ

ՀՐԱՊԱՐԱԿԱՆ ԴԱՍՏԽՈԾՈՒԹԻՒՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆ ԹԻՖԼԻՍԻ
ԺԱՂՈՎԱՐԱՆՈՒՄ ՄՎՅԱՆԻ 17-ԻՆ 1879 թ.

Արք. Յովհաննիստեան



Համբ. Էնֆիանեանցի, Տպարանում և Ընկ.

1881

Georgian Architecture

Дозволено цензурою. Тифлисъ. 15 января 1881 г.

28. 1124

41124-W

三八八

ՀԱՅԸ ԵՒ ՀԱՅՈՍՏԱՆԸ

0տարների աչքում

(ՀՐԱՊԱՐԱԿԱԳՆ ԴԱՍԱԽՈՍՈՒԹԻՒՆ ԸՆԹԵՐՑՈՒԱՆ ԹԻՖԼԻՍԻ-
ՔԱՂԱՔԱՐԱՑՈՒՄ ՄԱՅԻՍԻ 17-ԻՆ 1879 թ.)

Տիկնայք և պարոններ,

Հինգ հարիւր տարի կայ որ Հայաստանի
անկախութեան վերջին կայծը հանդաւ, հինգ
հարիւր տարի կայ որ Հայ ժողովուրդը իւր
յետին ապաստանարանիցը քշուելով, անտուն
անտեղ թափառում է իւր բնիկ երկրում և
նորա սահմաններից դուրս, ոչ մի տեղ դադար
չգտնելով իրան շրջապատող թշնամիներից:

Երազե պէս անցան Հայոց քաղաքական
կեանքի վերջին ժամերը: Ունայն եղան նոցա
հերոսական ջանքերը իրանց ցանկալի անկախու-
թիւնը և ազգային ինքնուրոյնութիւնը պահ-

պանելու: Եւրոպան, որի գլուխը այն ժամանակ կանգնած էր Հռոմի պապը, զարմանալի անտար-
բերութեամբ բարձի թողի արաւ Հային, չնայե-
լով որ այս քրիստոնեայ ժողովուրդը օգնու-
թեան ճեռք էր մեխնէլ նորան խաչի թշնամի-
ների դէմ մղած կռիւների ժամանակ: Հայկա-
կան ազատութիւնը, որ մի պահ յուսոյ ճառա-
գայթի պէս փայլեցաւ Կիլիկիան երկնքի վրայ,
Աւոն Զ.ի Հետ կարծես թէ անդառնալի կեր-
պով գերեզման մտաւ: — Երկարատև հոգեվար-
քին յաջորդեց Հոգեոր և բարոյական կեանքի
կատարեալ մեռելութիւնը: Սարկութեան լուծը
մինչև այն աստիճան ծանրացել էր Հայի վրայ
որ մոռանալ տուեց նորան իւր փառաւոր ան-
ցեալը և եթէ Հայութեան միակ սիւնը, նորա
փրկութեան միակ խարիսխը — Եկեղեցին եղած
զինէր, այսօր Հայ անունից անշուշտ, ուրիշ
շատ ժամանակակից ու դրացի ազգերի նման,
միայն մի թեթև յիշառակ մնացած Կրշնէր
գրքերում:

Այդ աղէտալի ժամանակամիջոցում ինքնաւ-
ճառնաշութեան զգացմունքը հետպհետէ մի ընդ-
հանրական ապշութեան և անդգայութեան

տեղի տուեց: Հայ ժողովուրդը զարմանալի համ-
բերութեամբ տարաւ այն բոլոր նեղութիւննե-
րին, որոնց նմանը հազիւ թէ ուրիշ ազգ երբ-
եիցէ կրած լինի. ոչ մի բողոք չքարձրացրեց
նա, անտրտունջ տարաւ բռնակալութեան և
կամայականութեան բոլոր հածոյըներին, որոնք
վերաւորումէն մարդկային արժանաւորութիւնը:

Քաղաքական կեանքի անկումից յետոյ, Հայ
ազգը, Հինդ հարիւր տարուան ընթացքում
շրջապատուած լինելով այնպիսի ազգութիւն-
ներից որոնք ծագմամբ, կրօնով և կրթու-
թեամբ տարբերվումէին իրանից, միշտ ձնշուե-
լով, միշտ հարստահարուելով նոյնից, երբէք
վաղուան օրուան համար ապահով չինելով,
կամաւորապէս դատապարտեց իւրեան մեռելու-
թեան: Այս տեսակ ինքնասպանութիւնը նա-
աւելի լաւ համարեց քան որևէ կենդանութեան
նշոյլ ցոյց տալ, որով կարող էր միայն մոլե-
ռանդ բռնակալների զայրոյթը գրգռել: Կար-
ծելով թէ աշխարհը տեսնում է իւր տան-
ջանքները, լսում իւր հեծեծանքները և անտար-
բեր մնում, նա երեսը գարձրեց աշխարհից, փա-
թաթուեցաւ ստրկութեան վերաբկուի մէջ և

տարածուեցաւ այն հողի վըայ, որի փառքի
համար նա երբեմն այնքան զոհաբերութիւնս
ներ է արել: Նորա մէջ կազմուեցաւ մի թիւր
համոզմունք, մի յամառ կարծիք, թէ հայն
երբէք չախտի յուսայ իւր սարկութիւնից բարձ-
րանալու, ուրիշների պէս մի լաւ օր տեսնելու:

Մինչ այսպէս ամէն բան կորած էր հա-
մարվում, հայ ժողովաւրդը, ընդհանուր հո-
սանքին ևնթարկուելով, յանկարծ սթափում է
իւր մահանման քնից, ոտի է կանգնում, նայում
է իւր շուրջը և զարհուրելով տեսնում այն բե-
րանաբաց անդունդը որ սպառնումէր կուլ տալ
նորան: Ծանր են այն տպաւորութիւնները որ
գործում են մարդկանց սրտերի վըայ գիտակցու-
թեան առաջին նշանները, բայց միւնյն ժա-
մանակ անհերքելի է նոցա բարերար ազգեցու-
թիւնը ազգութեան ապագայի համար: Նոր
ժամանակներում հայերը ցոյց տուին, թէ իրանց
կենսական ոյժը չէ սպառուել, այլ արևի ջեր-
մութիւնից և ջրի խոնաւութիւնից զուրկ
տունկի պէս երկար ժամանակ թառամած վի-
ճակի մէջ են մնացիլ նոր զօրութեամբ զար-
գանալու ու բարգաւաճելու համար: Հազիւ

կէս դար կայոր այդ արևի ջերմութիւնը սկսաւ
տաքացնել չայի թմրած մարմինը և չուրը
կազդուրել նորա հոգին, և ահա այսօր այդ
մարմինը կենդանութեան նշաններ է ցոյց տալիս,
այդ հոգին արձակվումէ դարեւոր կապանքներից:
Վարձ միջոցում կազմուեցաւ մի նոր հայկական
լեզու, նոր մտքերի և քաղաքակրթութեան
ժմարգման, դիւթական զօրութեամբ յարու-
թիւն առաւ մի նոր դրականութիւն, որ թէև
դեռ մանուկ, սակայն խոստանում է աճել և
գեղեցիկ պտուղներ արտադրել: Ամէն տեղ բա-
զուեցան և բայցում են ուսումնարաններ, առ-
ուանձին խնամք է տարվում իդական սեռի
դաստիարակութեան վըայ, որի կրթութիւնից
կախուած է մեծ մասմբ ազգի ապագան:

Տիկնայք և պարոններ. Երբ մի ժողովուրդ
սկսում է ձանաչել իրան, երբ նա կարողութիւն
է ստանում ներկայի և անցեալի համեմատու-
թեամբ հետազօտել իւր անկման խսկական
պատճառները, թոյլ տուեք ինձ ասել, որ այն
օրից ծագումէ նորա փրկութեան արշալոյսը և
իւր բանդի բանալին ինքն իւր ձեռքումն ունի
բունած: Ինչպէս իւրաքանչիւր անհատի, այս-

պէս և ամբողջ ժողովոդի մէջ սեպհական վիճակի գժգոհութիւնը ծնեցնումէ մի զօրաւոր ձգտում այդ վիճակը հետզիւտէ բարւոքէլու և լաւագոյն կեանքի հասնելու; Նորագոյն ժամանակների պատմութիւնը բաղմաթիւ օրինակներ է ներկայացնում, որոնցից երեսումէ թէ այս կարգի ժողովութիւնների օգնութեան աղաղակները միշտ արձագանգ են գտել քաղաքակիրթ աշխարհի մէջ, և որբան նոցա գործ դրած ջանքերը մեծ են եղել, այնքան աւելի համակրութեան արժանի են եղել, համակրութիւն որի մէջ չերմ խօսքերին յաճախ հետեւէ և գործը:

Հայաստանը և հայ անունը առաջին անգամ հանդէս եկան եւրոպական մասուլի մէջ Զէյթունի անցքերի ժամանակ, երբ մի բուռն լեռնական ժողովուրդ իւր արիական դիմադրութեամբ ցցց տուեց որ հայ արիւնը գեռչ սառել մեր երակների մէջ: Զէյթունցոց գործը իրեւ առաջին բողոք սարկութեան գէմ անսառելի հետևանքներ ունեցաւ ընդհանուր հայութեան համար: Լաենք թէ ինչ նշանակութիւն է տալիս այդ ապստամբութեան հռչա-

կաւոր հայագէտ Վիկտոր Լանգլուան, որի յօդուածը 1863 թուին մեծ տպաւորութիւն գործեց Եւրոպայում:

ՅԵւրոպայի ուշադրութիւնը յանկարծ դարձաւ թուրքիայի Հայոց վրայ, որոնց օսմանեան քաղաքականութիւնը կարծես իբրև զիսաւոր գոհ ընտրեց արևելքան քրիստոնեաների գէմ հանած կանոնաւոր և միանգամայն խիստ հալածանքների մէջ; Հայ ասելով, Եւրոպան գեռերէկ հասկանումէր մի ցիրուցան եղած վաճառական ժողովուրդ, որ միայն նիւթական շահերի ետեւից է ընկած և շատ քիչ մտածում այն ընկերական (սօսիալական) մեծ խընդիրների վրայ որոնք զբաղեցնում են ուրիշ ձնշեալ ցեղերի: Այսօր նա տեղեկանումէ թէ խօսքը չորս միլիոնից բաղկացած նշանաւոր առշգույք իւր անցքերի մէջ որոնք երկու ու կէս միլիոնը թուրքիայի իշխանութեան տակն է գանվում: Այս մեծ ու համացեղ բազմութիւնը, ընկած լինելով թուրքերի մէջ որոնք ձնշում, հարստահարումէն նորան, այս քրիստոնեայ ժողովուրդը այս խելացի ու աղատամիտ տարրը մահմէտականների բարբարոսութեան գէմու-

դէմ կանգնած, քայլ առ քայլ պաշտպանւ վումէ նոցա դէմ կամ սահմանադրութեան օրինաւոր հողի վրայ՝ որպէս զի իւր քաղաքային ազատութիւնը ձեռք բերէ, և կամ Տաւրոսի լեռներում զէնքը ձեռին՝ որպէս զի իւր անկախութիւնը պահպանէ: Սի հաստատուն և իմաստուն քաղաքագիտութիւն օսմանեան Դրան գործ դրած հին խորամանկութիւնների ու գաղտագողի միջոցների դէմ, մի դիւցազն նական քաջութիւն աւարառութեան ու սպանութեան համար ուղարկուած բաշխ-բօղուքների դէմ, ահա երկու առաջինութիւն որ պէտք է ճանաչել այսուհեան օսմանեան կայսրութեան Հայոց մէջ, և որոնք իբրև մի լժակ պիտի ծառայեն եւրոպական քաղաքականութեանը, երբ այս վերջինը կամենայ փորձ փորձել արդեամբ նպաստելու արևելքան քրիստոնեաներին իրանց ջանքերի մէջ:

Այս պատմական անցքը աչքի առաջ ունենալով, քաղաքակիրթ աշխարհի յարաբերութիւնը դէպի մեր ազգը՝ Եւրոպայի տեսակեաը դէպի մեր ժողովուրդը՝ երեք շրջանի կարելի է բաժանել: Առաջին շրջանը ակավումէ մեր

քաղաքական կեանքի անկումից և տեռմէ մինչեւ Զէյթունի ապստամբութիւնը. այս ժամանակամիջոցին Եւրոպան նայում է մեր վրայ՝ իբրև մեծ ձիրքեր ունեցող քրիստոնեայ ժողովրդի վրայ, որ կոչուած է իբրև միջնորդ քաղաքակիրթութիւն տարածելու Արևելքում: Եթէ քաղաքական անուաննել, սկավումէ Զէյթունի անցքերից և տեռմէ մինչեւ վերջին ռուս-տամակական պատերազմը. այս ժամանակամիջոցին Եւրոպացոց հայեացքների մէջ քաղաքական տեսակէտ է Նշմարվում: Վերջապէս երբ որդ շրջանը ակավումէ այն օրից երբ Սան-Սաեֆանօի դաշնագրութեան մէջ գրուեցաւ 16-րդ յօդուածը: Այս շրջանը կարելի է միջազգային անուաննել: Արդեօք Երբ կը վերջանայ այս շրջանը. — մեր ամենի ջերմ ցանկութեան համաձայն այն ժամանակ՝ երբ այդ միջազգային բառը Տաճ-կական Հայաստանի վերաբերութեամբ լոկ խօսք չելիլ, այլ իրականութիւն կը գառնայ. այս մինքն երբ Տաճ-կական Հայաստանը միջազգային միութիւն կը կազմէ:

Այսօրուայ օրը մենք բաւական հարուստ

դրականութիւն ունինք Հայաստանի մասին, որ
մանաւանդ այս վերջին դարում դարձրելէ իւր
վրայ քաղաքակիրթ աշխարհի ուշադրութիւնը:
Եւրոպացի Ճանապարհորդների կարգում եղած
են թէ դիտնականներ, թէ վերին աստիճանի
շրջահայեց և հանձարեղ մարդիկ և թէ պետական
անձինք, որոնք իւրեանց հետազօտութիւններով հարատացրել են արևմտեան Ճոխ
դրականութիւնը:

Բայց ի՞նչեցն է արդեօք որ Եւրոպան հա-
տուկոր, անձիշդ և շատ անդամ սխալ տե-
ղեկութիւններ ունի մեր մասին:

Ոորա պատճառն այն է նախ՝ որ բոլոր մինչեւ
այժմ տեսնուածն ու հետազօտուածը մեծ բան
չէ նայելով այն լայնատարած դաշտին որ կա-
րու է մշակութեան և հետազօտութեան. երկ-
րորդ՝ որովհետեւ հետազօտութիւնները ուղ-
ղուած են գլխաւորապէս բնադիտական ասպա-
րէզի վրայ, իսկ բուն ազգային կեանքը շատ փոքր
ուշադրութիւն է կրաւած. երրորդ և գլխա-
ւորապէս այն պատճառով՝ որ Եւրոպացոց ամե-
նալընափառ գրուածներն անդամ պարունակում
են իւրեանց մէջ բազմաթիւ սխալներ, անհիմն
կարծիքներ, եզրակացութիւններ և այլն:

Եթէ մէնք ուղենայինք մի առ մի յիշել
այստեղ նոյն իսկ գլխաւոր աչքի ընկնող սխալ
ները, մենք ամբողջ օրեր պիտի խօսէնիք, ամ-
բողջ հատորներ պիտի գրէնիք և այնու ամեա-
նայնիւ մի այսպիսի աշխատանք հազեւ թէ
այնքան օգտաւէտ լիներ որքան առաջին հայեաց-
քից գուցեւ թվումէ; Վորա փոխարէն ես աշ-
խատեցի այդ բոլոր սխալները մի սխաեմի բե-
րել, մատնանիշ անելով այն սկզբնական պատ-
ճառների վրայ, որոնցից ծագումնն այդ սխալը
ները: Եւ այս կերպով որ Ճանապարհորդի
գրուածքը և ձեռք տանելու լինիք, դուք կա-
րողէք վերածել նորա մէջ պատահած սխալ-
ները թիւր կարծիքները այն չորս պատճառ-
ներից մէկն, որ իսկոյն պատիւ կ'ունենամ յիշ-
շելուաբան ու հայոց բանական պատճառ ըստ

Առաջին պատճառը որ ամէնից պռած
աչքի է ընկնում, այն է, որ Հայաստանի մէջ
Ճանապարհորդողները աեղեակ չեն այն ազ-
գերի լեզուին որ իւրեանց հետազօտութիւնների
առարկայ են շինում: Այս ուրուսակի աշխ

Այս պահասութիւնը նախ և առաջ երկան է դալիս տեղերի, գիւղերի, գետերի նաև քաղաքների, տեղական բնբերի և այլն առուների մէջ: Մի զարմանալի և միանգամայն ծիծաղաշարժ երևոյթ է, թէ ինչպէս այս հարցերում շատ անգամ հետագայ ձանապարհորդը նախընթայ ձանապարհորդի հետ բանակուր է մանում, ուղղում է նորա սխալը հաստատ մնալով այն արտասանութեան վրայ, որ նշանակել է իւր տետրի մէջ, և հետաքրքրականն այն է որ յաճախ ինքն էլ է սխալվում: Այսպէս օրինակ մեր հռչակաւոր Տաթևայ վանքը պարոն հօփու անուանում է Դաթիֆ, ոռուսական 10 վերստական քարտէզը Տաթիվ, Աբիլսը կոչում է Տաթի է Փ, Պետցոլցը՝ Տաթին վ, այն ինչ այդ վանքը, ինչպէս ձեզ յայտնի է, իսկապէս կոչվում է գրվում է Տաթև:

Ես թոյլ կը տամ ինձ այստեղ մի ուրիշ օրինակ առաջ բերելու, որ գուցէ աւելի կը հաստատէ թէ ինչ զո՞ր քա՞րի առիթ է տալիս լեզու չիմանալը: Այս օրինակը ես առաջ կը բերեմ մեր եղբայրակից վրաց ազգի լեզուից: Ահա ինչ նկատողութիւն ենք տեսնում մենք

~~Հաքստհառուղէնի «Transcaucasia» գրքում:~~ «Մամաղագել վրացերէն նշանակում է տանուտէր, գիւղի գլուխ, այն ինչ մամածագել նշանակում է շունս: Պետք է ասել որ մամա վրացերէն նշանակում է — հայր, սա խլի — տուն, ուրեմն մամա ախլիսի կամ մամա մամա ախլի նշանակում է տան, գիւղի գլուխ, այն, ինչ որ մենք ասում ենք տանուտէր, իսկ մամա ձաղլի մի շատ տարածուած հայհոյանք է, որ ուղղում են դէպի այն անձը, որի հայրը իւրեւ թէ շուն է: Պ. Հաքստհառուղէնի ականջին այդ երկու բառն էլ միատեսակ են հնչել և նա դալիս է ի հարկէ այն եղրակացութեան որ, թէ տանուտէրի և թէ շան անունը նոյնահնչիւն են այն պատճառով, որ ինչպէս շունը պահպանում է տունը, այնպէս էլ տանուտէրը պահպանում է գիւղը:)

Լեզուին տեղեակ չլինելով ձանապարհորդ ները ստիպուած են ժողովոդի հետ ծանօթաւնալ, նորա հետ յարաբերութիւններ ունենալ, նոյն իսկ աղքիւրից քաղել իւրեանց տեղեկութիւնները թարգմանիների բերանով, և դուք կը համաձայնէք ի հարկէ, որ այսպիսի դէպում շատ բան կախուած է նոյն իսկ միջ-

նորդի անձնաւորութիւնից՝ նորա կրթութեան աստիճանից, աղքութիւնից և այնուու Այսպէս օրինակ երեք երեխին գերմանական ճանապարհորդներ՝ բանաստեղծ, Բոդենշտէտը, Գիտնական Հաբսահառութէնը և պրօֆեսօր Պարրոտը մեց անմոռանալի Խաչատուր Արովիանի միջնորդութեամբ են ծանօթացել Հայոց աղդի հետ և նորա աւելի Ճիշդ և ուրեմն, աւելի լաւ կարծիքներ են յայնում մեր աղդի մասին: Քայց Ճանապարհորդների մեծ մասը զորկ են այն բարեփազդութիւնից՝ բանիմաց մարդկանց միջնորդութեամբ իւրեանց գործը առաջ տանել և նորա Ճանապարհորդումեն հասարակ մարդկանց իւրեանց օգնական առնելով: (Յէ ինչպէս են այդ մարդիկը սպառաբար թարգմանուի մի գեղեցիկ օրինակ ներկայացնումէ մեզ Պետք ցոլը:)

Եթէ այս Պետք կամ նալով այցելել Անիի աւերակները բազմաթիւ ուղիւնիցներով անցնումէ առաջկաց առհմանը, նորան ճանապարհութիւն կերպով բնողութէ սահմանի գլուխին գտնուող տաճիկի ձիւնորդի մի խումբ:

~~ասել և նա յայտնումէ որ շատ երջանիկ է մեծ Սուլթանի երկում գամուռլով, որին Աստուած թող երկար կեանք պարզեցէ; Նորա ուղեկիցն երից մէկը թարգմանումէ այդ խօսքերը հայերէն, իսկ հայը տաճկերէն: Պետցոլդը ինքը զարմացած էր մնացել լսելով թէ նորա երկու խօսքը ինչպէս երկար դարդարուն ճառ է դարձել: Բայց պատահումէ ի հարկէ որ թարգմանիցը Ճանապարհորդին ամենայն ինչ հաղորդումէ ուրիշ բերանից, բացի այն դաւցէ ինչ որ վերջինս առումէ:)~~

Ա. Մի երկրորդ պատճառ կարողէ համարուիլ այն հանգամնեցը որ իւրաքանչիւր Ճանապարհորդ իւր ուղեորութիւնից առաջ կարդումէ այն բոլորը, ինչ որ գրել են իւր հետազօտելիք երկիր և ժողովրդի մասին նախընթաց Ճանապարհորդները:

Հասկանալի է որ նախընթաց Ճանապարհորդների նկարագրութեանց ընթերցումը ունի իւր կարեորութիւնը, հէնց այն պատճառով որպէս զի մարդու մէջ ցանկութիւնն ծնի այս կամ այն երկիրը հետազօտելու, սակայն այդ ընթերցանութեան վեաները շատ բազմա-

թիւ են. մարդուս դատողութիւնը կաշկանդա
վումէ, նա իրերի վերայ անկախ կերպով չէ
նայում այլուստիչ բազով, նա կանխակալ
կարծիքներ ունի:

Այդ երեսումէ մանաւանդ այն կարծիք
ների մէջ որ ճանապարհորդը յայտնումէ մի
ազգի բարոյական կողմերի մասին, ամենայն
հետագայ ճանապարհորդ մատնանիշէ անում
այն պակասութիւնների և այն լաւ կողմերի
վերայ, և այդ բաները հաստատելու նոր աշ
պացոյններ բերում ինչ որ արդէն յայտնել են
նախընթաց ճանապարհորդները:

Մենք այսաւեղ առաջ կը բերենք մի եւ
րեւելի ճանապարհորդի կարծիք որ ցոյց է տա-
լիս այս մետոդի պակասութիւնները՝ յիշելով
միեոյն ժամանակ թէ ինչ կերպով պէսք է
օգուտ քաղել նախընթաց ճանապարհորդների
գրուածներից:

Երբ ես մտադիր եմ մի երկրում ճանա-
պարհորդել, երբէք գրքերից չեմ ուսումնա-
սիրում այդ երկիրը: Ես չեմ ուզում որ ինձ
վրայ ազգեն ուրիշների գաղափարներն և կար-
ծիքները, որպէս զի կանխակալ կարծիքներով

չնայեմ իրերի և զանազան հարցերի վերայ: Այդ
ունի իւր լաւ և իւր վատ կողմերը. Ես աւելի
ազատ, աւելի ուղիղ եմ նայում շուրջու, իմ
կարծիքները անձնապէս առնելով աւելի ինք-
նուրոյն և Ճիշդ են, բայց ի հարկէ իմ աչքի
տակից փախումէ շատ բան, որի վրայ եթէ
ուշադրութիւնս կանխապէս դարձրած լինէր, ես
կը հետազօտէի. իմ նկարաղրութիւններին պա-
կասումէ կրիտիկա և լիակատարութիւնն: Երբ
ես վերադառնում եմ, սկսում եմ գրել թարմ
տպաւորութիւններով և հայեացքներով: Յե-
տոյ միայն սկսում եմ հետազօտել երկիրն ու
ազգը և կարդում եմ այն, ինչ որ ուրիշները
տեսել, հետազօտել, ժողովել են և իմ ձեռա-
գրին աւելացնում եմ հարկաւոր նկատղու-
թիւնները:

Մեր կարծիքով, եթէ ճանապարհորդը
ուզումէ մի ազգի մասին իւր կարծիքը յայտ-
նել, նորա հասարակական և քաղաքական դրու-
թիւնը Ճշգրիտ ըմբռնել և նորա նշանակու-
թիւնը ապագայում հաւանական կերպով որո-
շել, նա պէտք է ուսումնասիրէ այդ ազգի
պատմութիւնը որովհետեւ մի ազգի պատմու-

թեան արժէքն այն է որ, նա ցոյց է տալիս նորա կեանքի զանազան կերպարաննափղխութեանց մէջ մնացուն և յարատե ուղղութիւն, նորա բնաւորութիւնը, որ ոչ միայն անցեալն է հասկանալի կացուցանում մեզ, այլ և թոյլէ տալիս մի պարզ հայեացք ձգել ապագայի վրայց: Եւ փառք Աստուծոյ եւրոպական գրականութեան մէջ բաւական նիւթեր կան մեր ազգի պատմութեանը ծանօթանալու, բայց գժբաղդութիւնն այն է որ համարեա թէ ոչ մի ծանապարհորդ չէ ուսումնասիրել մեր անցեալը: Մենք հազարաւոր օրինակներ կարող էինք բերել հաստատելու համար թէ պատմութեան տեղեակ չլինելն ինչ սխալ մոլար կարծիքների է առիթուել մեր ազգի մասին. թոյլ տուեք ինձ բաւականանալ միայն մի կարծիք առաջ բերելով այստեղ:

Բօդէնշտէտը իւր Տասենդ ունդ էն Տաց իմ Orient գրքի մէջ ի միջի այլոց ասումէ թէ չայոց և ռուսաց եկեղեցու մէջ եղած տարրեարութիւնը այնքան չնչին է, որ ռուսաց համար գժուար չի լինիլ հաւատափոխութեան գործը հայոց նահագներում կարճ ժամանակում գլուխ բերել:

Այս կարծիքը ջրել շատ դիւրին է.

1) Շատ հեշտ է ապացուցանել որ յիշեալ երկու եկեղեցեաց մէջ եղած զանազանութիւնը շատ աւելի նշանաւոր է քան թէ երեսումէ պ. Բօդէնշտէտին:

2) Եթէ մինչեւ անգամ ենթադրելու լինինք որ զանազանութիւնը արդարե չնչին է, այնուամենայնիւ դորանից չի հետեւում որ միութիւնը կարճ ժամանակում կարող է գլուխ գալ: Բաւական է նաև մի փոքր պատմութեան հետ ծանօթ լինել որ մարդս այն եղբակացութեան դայ, որ մինչեւ անգամ շատ մօտիկ դաւանութիւններ կարող են դարերով միմեանց կողքին գոյութիւն ունենալ առանց միանալու. վկայ Անդլիան, Ամերիկան, Զուիցերիան և նոյն իսկ գերմանիան:

3) ~~Ա երջապէս պ. Բօդէնշտէտը ծակ մարդարէ է հանդիսանում. յիշեալ խօսքերը պ. Բօդէնշտէտը ասելէ 28 տարի առաջ և հաւատափոխութեան դործը բաղդաւորապէս ոչնչ արդիւնք առաջ չէ բերել: Ահա ձեզ վերջին տարիների թուանշանները որ հանած ենք ուսաց սինօդի հաշիներից.~~

~~Ընդունել են յոյն—ռուսական դաւանութիւնը կամ, ինչպէս հաշիւները ասում են, կցորդուել են ուղղակառութեան~~

1872-ին=13 հայ, 1873=7, 1874=11,
1875=7, 1876=8 1877=6:

III. Մի երրորդ պատճառ կարողէ համարուիլ այն հանգամանքը որ ճամապարհորդաները շատ ընդարձակ նպատակ են գնում իրանց և շատ փոքր ժամանակ գործ դնում այդ նպատակն իրագործելու:

Առքա ամենայն ճիգ թափում են որպէս զի իւրեանց ընթերցողներին ներկայացնեն երկրի լիակատար պատկերը: Առքա աչքի տակից չեն թողնում և ոչ մի հետաքրքրական առարկայ առանց նկարագրութեան և մի առանձին պատիւ են համարում իրանց համար այն բոլորը նկարագրելու, ինչ որ արդէն նոցա նախորդներն արել են, առանց ամենին քաշուելութէ արդեօք նորանոր փաստեր են առաջ բերում թէ ոչ:

Երբ, օրինակ, բոլոր գերմանացի ճանապարհորդները կովկասի գերմանական գաղթականութիւններն են նկարագրում: այդ շատ հաս-

կանալի է և ոչ ոքին իրաւունք չի տալիս յանդիմանելու նոցա: Բայց երբ ճանապարհորդների մեծամասնութիւնը նկարագրումէ մի երկրի թէ բնութիւնը և թէ ազգաբնակութիւնը — աշխարհազրական դրութիւնը, լեռները, գետերը, կենդանական, բուսական և հանքային թագաւորութիւնը — երկրի մեջ եղած բոլոր ազգութիւնները, նոցա բնակարանները, բերքերը, հագուստը, ապրելու եղանակը, լեզուն, բնաւորութիւնը, գերգաստանական կեանքը, հասարակային յարաբերութիւնը, ազգի անցեալը, ներկան, պատմական նշանակութիւնն ապագայում — գու մի այնպիսի աշխատանք է որ առանձին մարդու ցիժերից բարձր է և կամայ առկամայ տանումէ նորան դէպի անձշութիւն, վայրարաննութիւն և ուրիշ այդպիսի գեղեցիկ յատկութիւններ:

Գերմանիայում մի սուրբ է եղել երբեմն Ս. Պունապառան անունով որ մի խորը քաղաքական և երևելի աստուածաբան էր և միենայն ժամանակ մի շատ լաւ նալբանդ, զանդակներ ածող և կանանց շորեր կարող: Այդ ժամանակաները անդառնալի կերպով անցել են, այժմ աշ-

խատանքի բաժանման դարն է՝ չէնց այս իսկ պատճառով թէեւ ճանապարհորդները ամէն բանի ձեռնամուխ են լինում, սակայն իւրաքանչ չեւը նոցանից այն բանի վրայ ուշադրութիւն է դարձնում, աւելի լաւ կերպով այն բանն է հետազօտում, որի համար նա աւելի լաւ է պատրաստուած իւր նախկին պարապմունքով և իւր ընդունակութիւններով:

Այսպէս օրինակ Բօդէնշաէտը ամէն բանից առաջ բանաստեղծ է և բոլոր արեւելեան ազգերի վերաբերութեամբ նորա գլխաւոր ուշադրութիւնը դարձրած է ազգի բանաստեղծական կողմի վերայ — նորա Tausend und ein Tag im Orient լի է Միրզա Շաֆիի բանաստեղծութիւններով:

Պ. Հաքստհառդէն պատմութեամբ սնած և կրթուած մարդ է և հիմնալի աչք ունի աւմէն բան գիտելու և ձիրք այդ բոլորը նկարագրելու, — նորա գլխաւոր արժանաւորութիւնն այն է որ քննում է գերդաստանի և համայնքի կեանքը:

Դիւրուա գը Մօնպերէօն շատ լաւ հնագէտէ, Պետցօլդը հիմնաւոր գիւղատնանես և այլն:

Այստեղեց պարզ երևում է որ իւրաքանչ չեւը ճանապարհորդ պէտք է մի որոշ ուղղութիւն ունենայ իւր հետազօտութիւնների մէջ, իւր նկարագրութեան ասպարէզը սահմանափակէ, որով և անմիջապէս երեան կուգան աշխատանքի բաժանման բոլոր առաւելութիւնները: Այս կերպով իւրաքանչիւրը կարող կը լինէր իւր ասպարէզի մէջ, իրան ընտանի գիտութեան մէջ, շատ օգտաւէտ գործ կատարել և իւր լուման ընդհանուր գանձանակի մէջ գնել: բացի այդ շատ աշխատանք և ժամանակ կը խնայուի:

Վերջին հանգամանքը, ժամանակը մանաւանդ մեծ նշանակութիւն ունի, որովհետեւ ճանապարհորդների մեծ մասը մինչև այժմ համեմատաբար քիչ միջոց են մնացել մեր հայրենիքում:

Պ. Չորրորդ և վերջին պատճառը կարող է համարուիլ մի հանգամանք որ շատ ծանրաւկնեւ նշանակութիւն ունի, բայց որի վրայ եւ չեմ կարող այստեղ երկար կանգնել: Ահա այդ հանգամանքը:

Ամենայն գիտնական որ ճանապարհորդում է

Իուսատանում, կամ նորա թագից կախումն ունեցած երկներում, կարողէ համոզուած լիւ նել որ աէրութիւնից հովանաւորութիւն և լաւ վարմունք կը դանի: Տեսէք թէ ինչէ աւ սում այս հանգամանքի մասին Ուսոցօղը իւր դրուածքում: «Ավ որ ուզումէ կովկասում ճանապարհորդել և մի դիտնական կամ որևէ ուրիշ օգակար նպատակ ունի, լուսաւորուած և բարեացակամ տէրութիւնը անկասկած իւր օգնութիւնը կը հասցնի նորան և այնպիսի հեղինակութիւն կը տայ նորան որ կարողանայ հրամայիլ: Այն ժամանակ այս ճանապարհորդի վրայ նայում են այնպէս իբրև թէ նա տէրութեան գործքերով է ճանապարհորդում և տէրութիւնը անհետացնումէ ձեռքից եկածի չափ այն բոլոր խոշոնդուները որ կարաղ են նորան պատահել, ամենայն առաւելութիւն արփաւմէ նորան, պմէն ծառայնդ աշխատումէ նորան օգտաւէտ լինել, ծառայել նորան, որովհետեւ այդպէս է հրամանը»:

Այսպէս ուրեմն տէրութեան գործքերով ճանապարհորդողը իրան տուած պաշտօնական բնաւորութեամբ մեծամեծ առաւելութիւններ

ունի. բայց ովկ է կարող համարել այն բոլոր վնասները որ հէնց այդ պատճառով այդպիսի ճանապարհորդի համար են ծնում:

Անմիջական հետեւանքն այն է որ ժողովուրդը այսպիսի ճանապարհորդին տէրութեան ժառայողը չենավնի կէ համարում:

Այսպէս օրինակի համար շաքստհառվէնը պատմումէ հետեւեալը. «Եթե ես մի քանի բառ նիմաց անձինքների հետ միասին ի միջի այլոց և ոստիկանապետի հետ, ուզումէի երեանի նահանգի երեելի ջրանցքների սիսաեմը ուսումնասիրել և նոյն խսկ պ. Արովեանը թարգմանչի պաշտօնն էր կատարում, ժողովուրդը ոկաց մոածել որ ես երեի մի գաղտնի յանձնարարութիւն ունիմ քաղաքի հանգամանքները քըննելու և իմ վճիռը տալու այն գանգատաների մասին որ ժողովուրդը վերջին ժամանակ տուելէ տէրութեան, ես քանիցս անգամ բողքեցի այդպիսի կարծիքի դէմ համոզելով որ ես մի պարզ ճանապարհորդ եմ որ ամենայն բան ուզում է տեսնել. բայց բոլորն ի զուր էր. ժողովուրդն հաստատ համոզուած է որ ես մի գաղտնի պաշտօնական յանձնարարութիւն ունիմ գուցէ անմիջապէս նոյն խսկ կայսրից:»

Մի քանի աւելի հետաքրքրական դէպքեր պատմում է պարոն Պէտցօլդը. «Ինձ շատ անգամ պատահելէ, ասում է նա, որ ես իբրև իմ ուղեկիցների կարգում բարձրաստիճան անձն ստիպուած էի մի քանի ծէսեր կատարել. երբ համում էի մի գիւղ՝ ճանապարհի գլխին հաւաքուած ժողովուրդը սպասում էր ինձ. ես անպատճառ տիտը է նորան հետևեալ հարցերը առաջարկեի. — «Բնչպէս էք, զ՞ո՞չ էք դուք, արդեօք գանգատ ունի՞ք»: Եւ պատասխանը միշտ լինում էր «Ճատ չնորհակալ ենք, մենք դոհ ենք և ոչինչ գանգատ չունինք»: «Բնական է, աւելացնում է Պէտցօլդը, որ խելք չէին անիլ եթէ այլաւ պէս պատասխանէին, որովհետև իմ ուղեկիցների մէջ անկասկած այնպիսի աստիճանաւորներ կային, որոնց վրայ նոքա գանգատելու շատ բան ունէին»:

Մեր խնդրից դուքս է ցոյց տալ թէ ինչ նշանակութիւն ունի այդ բանը: Նոյն խակ Պէտցօլդը ասում է որ նա ամենայն տեղ նկատելէ որ ժողովուրդը աստիճանաւորից քաշվում; Հաւատ չի ընծայում նորան, և այլն: Այսքան միայն կամենք, որ եթէ ժողովուրդը ճանապարա

Հորդին չինոմնիկի տեղէ ընդունում, այդ չէ կարող նպաստաւոր լինել նորան որ ուզում է մի ազգի ներքին կեանքը ուսումնասիրել:

Մենք անհրաժեշտ համարեցինք այս կարձառօտ տեսութեամբ պարզել թէ որպիսի աննպաստ հանգամանքների ներքոյ են գտնվում Հայաստանի ճանապարհորդները, բայց և այնպէս հին քաղաքակիրթ ազգ լինելով մենք այնպիսի յատկութիւնների տեր ենք, որոնք լուսաւորուած օտարի աշքից չէին կարող վրիպել: Այժմ ես առաջ կը բերեմ օտարների կարծիքը մեր մասին, գլխաւորապէս աչքի առաջ ունենալով այն եւրոպացոց, որոնք գուշակել են մեր ապագայն:

Ահա ինչ գոյներովէ նկարագրում և ինչ կարծիք է յայտնում մեր ազգի մասին անցեալ 18-րդ դարու գիտնական Փրանսիացի պ. Օլեվիէն խորհանապարհորդութիւն դէպի Օսմանեան կայսրութիւն, Եգիպտոս և Պարսկաստան վերնագրով եռահամոր դրափի մէջ:

Օսմանեան կայսրութեան մէջ հայերն են ամենամեծ առուտուր ունեցողները և միւնքն

ժամանակ այդ գործը ամենից աւելի հմտութեամբ առաջ տանողները: Նոքա համբերող են, խնայող ու անխոնջ. նոքա ճանաւարհորդումնեն Ասիայում և Հնդկաստանում, նոքա խանութներ և մարդիկ ունին ամեն տեղ: Հայոց մեծ մասը մեքենական արհեստներով են պարապում: Նոքա սեղանաւորներ են, կապալառու և փաշաների ու ուրիշ մեծամեծ անձինքների գործակալներ: Նոցա մեզադրումնեն իբրև թէ ոչինչ միջոց չեն խնայում հարստանալու համար և թէ երբ կարող են խարումնեն ապրանքների մէջ: Սակայն պէտք է խոստովանել, որ ձգտելով ձեռքից եկածի չափ շատ փող աշխատել, Հայերը, շատ սակաւ է պատահում, որ Ճիշդ չկատարեն իւրեանց պարտաւորութիւնները և Ճիշդ են կատարում իւրեանց խոստանքները:

Հայերը խիստ են իւրեանց վարչութարքի մէջ, ճշտութեամբ պահպանումնեն իւրեանց հաւատի պատուերները, տգէտ են և նախապաշարուած: Նոցա պակասումէ միայն կրթուաթիւն և մի տէրութիւն որ այնքան ճնշող չլիւնէր որքան տաճկականը, աւելի արդար լիւնէր,

նէր, որպէս զի Հայերը վերին ասաիմանի յարգելի ազգ դառնային: Ահա ինչ գոյն գոյն Ահա ինչ գրում Հայերի մասին պամբան, որ 1820 թուականին Ֆրանսիայի հիւարասոս էր Թիֆլիսում: Ազգական գոյն գոյն Գովաբանկերով Հայկական հիւրասիրութիւնը նա շարունակումէ. Վիթէ այս պատկերի վրայ աւելացնենք պարզ ճաշակ, խիստ խնայողութիւն, զարմանալի կանոնաւորութեան ողի, մեծ ընդունակութիւն առևետրական գործերում մենք նկարագրած կը լինինք Հայերի լաւ կողմերը: Գուցէ ոչինչ հակադիր պատկեր ներկայացնելու ընւնայինք, եթէ Հայերը, անկախ ազգ կազմելով, միշտ խաղաղ դրութեան մէջ ապրած լինէին և կառավարուէին իւրեանց սեփական օրէնքներով, բայց հրէաների պէս կապուելով իւրեանց պատմական յիշատակներով աշխարհի սկզբի հետ, նոցա պէս ցրուած լինելով բոլոր Ասիայում, նոքա միշտ ենթարկուած են եղել բռնակալ տէրութիւնների, հպատակուած լինելով Տաճկաստանում, Հին Հայաստանում, բոլոր Պարսկաստանում տարբեր հաւատի տէրերի, որոնք ուրիշ առաջնորդ չեն

ունեցել բայց եթէ իւրեանց կրքերը, և ոչ
ուրիշ օրէնք բայց եթէ իւրեանց կամքը:

Սոցա շքեղ ապրուսոր, հարստութիւն-
ները կարող էին գայթակղեցնել իւրեանց բռնա-
կաներին, և նոքա յիրաւի դիզում էին գանձեր
և ժլատ էին: Մի անդգոյշ խօսք, մի անկեղծ
կարծիք կարող էր յաճախ կորցնել նոցա—նոքա
լուող և երեսապաշտ դարձն: Երախտադիտու-
թիւնը դէպի իրանց պատուազուրկ եղած բաշ-
րերաները կարող էր վնասել իրանց, նոքա երա-
բեմն ապերախտ են, գտնուած: Մահմետական
երկրներում չկարողանալով մեծամեծ պաշ-
տօնների ու պատիւների համել, վաստակելու
մէրը նոցա գործունէութեան միակ շարժա-
ռիթը դարձաւ:»

Սակայն, ինչպէս մերեք յիշեցինք, գամ-
բայի կարծիքով եթէ այդ ազգը անկախ կեանք
վայելը և իւր օրէնքներով կատավարուէր, այս
պակասութիւնները բոլորովին աեղի չէին ունե-
նալու:

Ահա ինչէ ատում ամերիկան միսիօնար
պատոր Դվայտը Հայերի մասին: Ուտք է նա-
խապէս նկատեմ որ այդ պարոնը էրկար տա-

րիներ ապրելէ Տաճկաստանում բողոքականու-
թիւնը տարածելու համար և առանձին պատ-
ճառ չունի Հայերից գոհ լինելու, որովհետեւ
այդ ազգը այնքան հաւատարիմէ իւր հաւա-
տին:

«Աշխարհիս երեսին եղած Հայերի թիւը
կարելի է երեք մլիօն համարել: Կէսից աւել-
ին բնակումեն Տաճկաստանում: Շատերը ապ-
րում են Ռուսաստանում, մանաւանդ Վրաստանի
նահանգներում, շատ Հայեր կան նոյնպէս և
Պարսկաստանում:... Ամենայն տեղ ուր գտնվում
են նոքա, համարուած են ձարպիկ և բանիմաց
մարդիկ և բոլորեքեան համաձայն են և խոս-
տովանումեն որ նոքա հասարակ խելքի տեր
մարդիկ չեն:

Տաճկաստանում նոքա աւելի բարձր են
հանդիսացել քան շրջակայ ազգութիւնները
իւրեանց առեւտրական գործունէութեամբ և այն
ընդունակութիւններով որ ունին դէպի մեքե-
նական արհեստները: Գլխաւոր վաճառականները
Հայերն են ինչպէս և բոլոր մեծ սեղանաւորները
և գուք կարող էր համոզուած լինել որ կը գտնէք
նոցա ամէն մի ձեռնարկութեան և գործի պա-

բագլուխ, որ մունագիտական պատրաստութիւնն
է պահանջում:

Սոքա տաճկի հաստատամառթիւնը ու
նին առանց նոյանշարժութեան, նոքա յոյնի
նուրբ և թափանցիկ միտքն ունին, առանց նորա
թեթևամոռթեան, միով բանիւնոքա Արեւելքի
Անդօ—Արքոնացիքն են:» Դուք զիտիք, պա-
րոններ, որ ամենամեծ զովեսար որ մի անդիշացի
կամ ամերիկացի կարողէ անել՝ այդ այնէ որ
համեմատի իրեն հետ խրեան հաւասար հա-
մարի, և այդ զովեսախն մենք արժանի ենք
գտնուել:

Մի ուրիշ ազգ, որի հետ երբեմն համեմա-
տութիւն մեզ, Զուիցերացիքն են: Այսպէս որիւ-
նակի համար Վրանսիայի հռչակաւոր բանաւ-
ստեղծ Վամարթիւնը Տաճկա - Հայերի վրայ Խօսե-
լով ասում է հետեւալը. «Հայերը Արեւելքի
Զուիցերացիքն են, նոյա պէս աշխատասէր, հան-
դարա, կանոնաւոր, բայց նոյա պէս էլ հա-
շուղ և անյագ»:

Երանի թէ մեր բոլոր պակասութիւնը այն
լինէր որ զուիցերացց պէս հաշուող և անյագ
լինէիք. մեր Տաճկաստանի եղբայրները հազեւ

թէ դժուհ լինին հռչակաւոր բանաստեղծի
պարսաւանգից. ցանկանք նոյա միայն որ կիսով
չափ զուիցերացց նման անյագ լինին իրանց
համար քաղաքական իրաւունքներ ձեռք բե-
րելու:

Բայց պէտք է նկատենք, որ առաջին հայա-
գէններից մէկը՝ պէտք գիւլօրիէն, համաձայն չէ
Լամարթինի կարծիքին: Ասկայն ախրելու պատ-
ճառ չունինք. նա մեզ համեմատումէ մի այլ
ազգի հետ, որ նոյնքան յարգելի ու համակրելի
է: Ահա նորա խօսքերը. «Ասում են, որ Հայերը
Արեւելքում նոյնն են ինչ որ Զուիցերացիք Ա-
րեւմաւոքում, աւելի արդար կը լինէր Հոլան-
դացիների հետ համեմատել նոյա—նոյա մէջ
նկատվումէ նոյն յարատե բայց հանդիսա զոր-
ծունեւութիւնը, նոյն ձգտումը հարստութիւն
ձեռք բերելու, թէև զա մի վոքր բան լինէր,
նշն արհամարհանքը զէպի արտաքին փայլը:
Բոլոր նոյա յառաջաղիմութիւնները, որ կա-
տարփում են անդորրութեան մէջ, անյաց են
Արտապային, որ չեն համեմատ նոյա զբքերը և
պարբերական հրատարակութիւնները»:

Շատ ցաւումեմ որ Ժամանակի սղութեան

պատճառով չեմ կարող առաջ բերել այս
տեղ բարոն Առագուստուս Հաքստհառուղինի Հայոց
կեանքի հիանալի նկարագրութիւնը։ Այսքան
բաւականանանք միայն ասելու որ իւր երեւելի
երկհատոր ճանապարհորդութեան յառաջա-
բանի մէջ իւր խորիմաստ հետազօտութիւն-
ների դլիսաւոր արժանաւորութիւնն այն է հա-
մարում, որ նորան յաջողելէ մատնանիշ անելու-
հայ ազգի ապագայ նշանակութեան վրայ Ա-
րեւելքում։

Ահա նորա բռն խօսքերը։ Ահա երկու
առարկայ, որոնք արժանի են աւելի մէջ ուշա-
զրութեան և աւելի մանրամասն հետազօտու-
թեան, նախ այն նմանութիւնը և ըստ երեւու-
թին նաև ազգակյութիւնը որ երկումէ Յսէթ-
ների սովորութիւնների ու կենցաղակարութեան-
և հին գերմանացոց մէջ և ապա այն ծան-
քակշուր դիբքը որ ներկայում բռնումէ Հայոց
ազգը։ Բոլոր նշաններից երեւումէ որ հէնց այս
ազգը աստուածային տեսչութեամբ լնտրուած է
իբրև միջնորդ քրիստոնէութիւնը և քաղաքա-
կրթութիւնը տաարձելու Արեւելքում։ Տարակյա-
չայ որ մէջ պատմական համաշխարհական

նշանակութիւն ունի այն հանդամանքը, որ այս
քրիստոնեայ ժողովուրդը ցրուած է մի մեծ տա-
րածութեան վրայ, Մարտկովոյից սկսած մինչև
Զինաստան և միենոյն ժամանակ նորա բոլոր ան-
դամները կապուած են միմեանց հետ հասա-
րակական, քաղաքական ու կրօնական կապերով
և մի ազգային միութիւն են կազմում։»

Պ. Հաքստհառուղինի գրուածը կարող է մի
գասական զրուածք համարուիլ Հայերի և Հայոց
կեանքի մասին։ Ես թոյլ կրտամ ինձ մէջ բե-
րել մեր երջանկայիշատակ Ներսէս Կաթողի-
կոսի բարոն Հաքստհառուղինին շնորհած կոն-
դակը։ Այդ հետաքրքրական, նոյն խակ կաթողի-
կոսի ձեռքով գրած կոնդակը ցոյց կրտայ մեզ
թէ Ներսէս Աշտարակեցու համարմունքը գէպի
բարոն Հաքստհառուղինը և թէ ընդհանրապէս
նորա հայեացը օտար ճանապարհորդների գրած-
ների մասին։

Այս կոնդակի բնագիրը ի հարկէ գրաբար է
եղած. խակ իմ աշխարհարար թարգմանութիւնը
գերմանական թարգմանութիւնից է, ուրեմն զե-
ղեցկութեան ։/։ մասը կորած պէտք է հա-
մարել։

«Արևիս, ծառայ Յիսուսի Քրիստոսի և Աստուծոյ ողորմութեամբ կաթողիկոս ամենայն Հայոց և Պատրիարք Սուրբ Էջմիածնայ Աթոռի, բարեսիրտ և գիտական բարօն Փօն Հաքառհառդէնին:

«Հետեւելով մեր Քրիչե պատուիրանին, որ հրամայումէ մարդու հետ համբաւելիս, ի նշան սիրոյ, խաղաղութիւն ցանկալ, պարտաւոր եմ և ես նախ խաղաղութիւն և բարիք ցանկալ քեզ և ապա յայտնել իմ տմենամեծ շնորհակալութիւնը այն գեղեցիկ և ճշգրիտ տեղեկութիւնների համար, որ դու հաղորդել ես որպէս ռուս-կովկասեան նահանգների և նոցա բնակչաց մասին, նոյնալէս և Հայոց ազգի վրայ: Ես ինքս այն երկրումն եմ ծնուած. շատ բան տեսել եմ, շատ բան էլ կայ որ լսել եմ և յաճախակի շատ զարմանում էի եւրոպացի ճանապարհորդ ների նկարագրութիւնների վրայ, որոնք առանց որևէ հիմնաւոր տեղեկութիւններ ունենալու խօսումէին ամենայն բանի վրայ և իրանց առասպելներով ոմանց զարմանք էին պատճառում, իսկ միւսներին միանգամայն սիսալ գաղափար էին առիս. այս երկրների մասին:

դու, բարօն, քո բոլոր հետազօտութիւնների մէջ որոնումէիր Ճշմարտութիւնը, կամենում էիր ամէն բան մանրամասնօրէն և հիմնաւոր կերպով խմանալ և քո բոլոր կարծիքների մէջ այս աղջերի մասին մի այնպիսի բուռն և բուռն քրիստոնէական սէր ցոյց տուիր, որ ես սրբազն պարտաւորութիւն եմ համարում այս սակաւաթիւ առղերով յայտնել քեզ իմ սրբազնին շնորհակալութիւնը քո մարդասիրութեան, արշարագատութեան և այն պատրաստականութեան համար՝ որ դու յայտնում ես իմ ազգակիցներին օգնելու ամէն տեղ ուր կը պատահիս նոցա:

(Ստորագրած)

Կաթողիկոս և պատրիարք ամենայն Հայոց Ներսէս:

Պետ. 27 յունվ. 1844.

Ճեներալ Ժիլ Խօսելով Հայաստանի մասին բացագանցումէ. «Հայաստան, մեծ անուն, մեծ յիշատակ անցեալ ժամանակների, մեծ տարր մի նոր ապագայի: Ով գիտէ, ասումէ նա, թէ 50 տարուայ մէջ ինչ պիտի լինի այդ երկիրը ուր օր աւուր աճումէ հայ ազգը, սերկիրը ուր օր աւուր աճումէ հայ ազգը, սերունդ տոկուն և լի ապագայով:»

Ահա ինչպէս են խօսում հայ ազգի մասին երկու անգլիացի գւանականներ՝ պ. ջէմս բրայյը և կապիտան բերնարին։ Երկու գիտնականներն էլ իրանց ձանապարհորդութիւնը յանձն առին սորանից մօտ երեք տարի առաջ և աշարտեցին, կարելի է ասել, անմիջապէս պատերազմից առաջ։

Հայերը, առումէ բրայյը մեր հովկասեան ժողովուի վրայ խօսելով, երկրի ամենից եռանգոտ և ամենից աւելի աչքի ել եացող ժողովուրդն են։ վաճառականութեան մեծ մասը նոյն ձեռին է։ Նոքա ոչ միայն խանութիւ առուտուր ունին, այլ և մեծ առեւտրական ձեռանարկութիւններ են յանձն առնում։ Շատերը պետութեան ծառայութեան մէջ են և լաւ կեանք են վայելում։ Խսկապէս ռուս աստիճանաւորների կէսը Անդրկովկասում հայեր են։ (պարօն Երից ցեանը հիմնուելով կովկ. օրացոցի վրայ՝ «Տիֆլ. Վ. Կատա» տպած յօդուածում շատ աւելի փոքր քանակութիւն է ցոյց տալիս) Նոյն մէջ կան շատ լուսաւորուած, շատ ընդունակ մարդիկ, հայի կրթութեամբ, և այս տեսակ մարդկանց թիւը օրէցօր աւելանումէ։ Միով բանիւ, անկառ-

բելի է հայերի համար չգուշակել մի երջանիկ ապագայ։ Թուրքիայի հայերի վրայ տեղեկութիւններ տնենալու համար՝ պէտք է զիմել բերնարիի աշխատութեանը։ Նա երկար ժամանակ մնաց ձայաստանի զանազան քաղաքներում և շատ անգամ առիթ ունեցաւ տեմնուելու և խօսակցելու հայոց հետ։ Նոքա ցոյց չէին տալիս անգլիացի ձանապարհորդին այն ծառայական շողոքորթութիւնը, որով շրջապատում էին նորան թուրքերը, չէին համբուրում նորա ձեռքերն ու կրոնները։

Բրայսի նման նաև համարում է հայոց խելացի, եռանգուն, ընդունակ նաև կրթուած ժողովուրդ։ Ասիական Տաճկաստանի նահանգներում ասում է նա, հայերը քաղաքակրթութեան միակ ներկայացուցիչներն են։

Որպէս զի կողմնապահութեան մէջ շեղադրեն ինձ ես առաջ կրթերեմ մի հայհայական կան կարծիք, որ յայտնում է հայերի մասին հետեւալը։ «Ժողովուրդը (այս խօսքերը գրուած են 1877 թուին), թէպէտ շատ խառնուած, մեծաւ մասամբ հայ և քրիստոնեայ է։ Հայը

զլսաւոր տարրն է կազմում, նոյն իսկ սահմանից (այսինքն ռուսաց սահմանից) այն կողմը՝ Երդշրումի ճանապարհի վրայ. մի անխելք ու անբարոյական ժողովուրդ որ չգիտեմ ինչ անկախ ժագաւորութիւն է պահանջում; մուտանալով որ արդէն բազմաթիւ տարիներ պարապումէ միայն վատութեամբ, գողութեամբ և ամէն տեսակ խարէութեամբ: Ինքը պարսից, ժուրըերի և ռուսաց հպատակն է և միշտ խոնարհ երկրապագու վերջին յաղթողին:» Այս խօսքերը 1877 թուին Խգդիրից գրուած են հռչակաւոր Խիտորէ ֆրանսիացի գիտնականին. Հեղինակը Journal positive-ի խմբագիր պ. Վիրուբովն է, որ ապրում է Ֆրանսիայում: Դուք աեմումէք որ մինչև անդամ ֆրանսիական քաղաքակրթութիւնը չի կարողացել մեզմայնել պարոն... օվ'ի բնածին կոստութիւնը:

Դուք աեմումէք որ ճանապարհորդները մատնանիշ են անում և մեր թոյլ կողմերի, մեր պակասութիւնների վրայ. բայց նոյսա ամենքին մեր փոխարէն պատասխանել է դարուս ամենամեծ բանաստեղծ—Բայրնը որ ասումէ՝ «Դժուար է մի ուրիշ ազդ դանել աշխարհիս երե-

սին, որի պատմական անցեալը այնքան քիչ արաւտաւորուած լինի յանցանքներով. Հայերի գլխաւոր յատկութիւնները խաղաղական են, իսկ ախտերը՝ այն բոնակալութեան հետևանքը, որի տակ հեծում են:»

— Ինձ համար անկարելի է մի առ մի յիշել այն բոլոր կարծիքները որ յայտնել են մեր ազգի մասին. սակայն իմ առաջ բերած օրինակներից պարզ երեսում է որ այն օտարազգիքը, որոնք առիթ են ունեցել մօտիկ ծանօթանալու մեր ազգին, գնահատում են նորա վսեմ արժանաւորութիւնները և գեղեցիկ պազայ են գուշակում նորան:

Այժմ ես կաշխատեմ ցոյց տալ թէ ինչ միջոյներ առաջարկեց մի մեծ պետութիւն Տաճկական Հայաստանի ապագայ վիճակը բարոքելու համար. թէ ինչ հիման վրայ նա Հայաստանի համար ինքնավարութիւն էր պահանջում:

Այդ մեծ պետութիւնը ոչ Անդիսան էր, ոչ Ֆրանսիան, ոչ Գերմանիան, ոչ Աւստրիան և ոչ Ռուսաստանը, խօսքը 6-դ մեծ պետութեան մասին է, որի անունը ՄԱՄՈՒԻ. է:

առաջ մի մասն պահանձն մատաւուր զգու մեն
առաջը մի ցոյն ։ Անց էլուստայու մինչ Յու առա առ
ափու նոյ ուն մատարաբառայ պահանձն Ելուստայ, դու
իցու այստեղ մասն մատարաբառոց միա պահա

II.

Այն օրից որ հայկական խնդիրը յարու-
ցուեցաւ, ինչպէս բնական է, շատ բան գրուե-
ցաւ ու խօսուեցաւ նոյն խնդրի վրայ պարբե-
րական թերթերի և հրապարակական ժողով-
ների մէջ ։ Հայ լրագրութիւնը և եւրոպական
մարդասիրութիւնը ձեռք ձեռքի տուին և հա-
մամիտ ու համաձայն աղաղակեցին, թէ օսմա-
նեան կայսրութեան միւս հպատակ երկրների
հետ չայսաստանի վիճակն էլ պէտք է բարոքել,
թէ սուլթանին հարկատու քրիստոնեայ ժողո-
վորդների հետ հայերի վրայից էլ պիտի թե-
թեանայ մահմետականութեան դարեսր լուծը,
թէ հայերը պիտի վարձատրուին իրանց կրած
չարչարանքների համար և գոնեա ինքնամարու-
թիւն սիտք է ստանան: Եւ ի՞նչ բանի վրայ
էին հիմում իրանց պահանջմունքը հայու-
թեան այս փաստաբանները. ի՞նչ փաստեր էին

առաջ բերում նոքա քաղաքակիրթ աշխարհի
ուշադրութիւնն ու համակրութիւնը դարձնելու
հայ ժողովսի վրայ, ինչով էին կամենում աղ-
դել եւրոպական քաղաքականութեան վրայ և
նորա որոշումներին հայութեան օդախին յարմար
ուղղութիւն տալ: Նոքա ասացին ու կրկնեցին
թէ հայ աղզը աշխարհի ամենահին աղզերից
մէկն է, որ անթիւ քաղաքական յեղափոխու-
թիւնների զիմանալով եկել հասել է մինչեւ
մեր օրերը. թէ այդ աղզը ունեցել է մի փա-
ռաւոր անցեալ, վկայ այն հոյակապ աւերակները
որոնք ծածկումն չայաստանի դաշտերը. թէ նա
ունեցել է մի դասական լեզու և նոխ զրակա-
նութիւն որ գնում հասնում է մինչեւ քրիս-
տոնէութեան առաջին դարերը, վկայ այն զրա-
ւոր յիշատակարանները որոնք գեղեցիկ լիս են
տարածում ասիական աշխարհի վրայ՝ Ասո-
րեստանցիններից ու Բաբելոնիներից սկսած մինչեւ
Թաթարներն ու Մոնղոլները. թէ այսօր իսկ
այդ աղզը, աշխարհի անդրանիկ քրիստոնեայ
աղզը, իւր խաղաղասէր ու աշխատասէր բնա-
ւորութեամբ, իւր քաղաքակրթական ընդունա-
կութիւններով մեծ յշխեր է խոստանում. թէ

նա արդէն յաջողեցաւ առաջայնել մի նոր լեզու և մի նոր զրականութիւն, որոնք հետքաւ հետէ մշակուելու ու ձոխանալու վրայ են. թէ վերջապէս այդ ազգի կոչումն է քրիստոնէութիւնն ու քաղաքակրթութիւնը տարածել ու բեկեան ժողովովների մէջ: Ապա ուրեմն այս պիսի ազգը չէ կարող բոնակալութեան լծի տակ մնալ, նա պէտք է մի ինքնօւրոյն ազգային ու քաղաքական մարմին կազմէ:

Այս կամ սորա նման փաստեր բերուեցան հայ ազգի իրաւունքները պաշտպանելու: Բեր լինի դաշնադրութիւնը ցոյց տուեց թէ ինչ կշուունեցան այս բոլոր փաստաբանութիւնները: Ինքնախարութեան դառն բաժակը ամէնից առաջ և իմօտոյ բմակեցին չոստանդնուպօլսի հայ պատրիարքարանի կողմից ուղարկուած պատգամաւորները: Ե՞նչ ցաւ պիտի զդային նոքա տեսնելով որ այն երկրի ներկայացուցիչը որի սահմանները հազիւ նշմարժում են եւրոպական քարտեզի վրայ, փոքրիկ Մօնտէնէգրօի պատգամաւորը բարձրագլուխ մանումէ բերենի վեհաժանով, մինչդեռ ինքեանք՝ հայ ազգի եւ հետիւնանները դլիսակոր սպասում էին զրանը

որ ողորմածութիւնը ներս հրաւիրէ նոյա: Ինչի՞ վասն զի Նիկոլայ իշխանի երեսփոխանը՝ հզօր իւր իրաւունքներով, իւր ազգի պատերազմի դաշտում թափած արիւնով, համոզուած էր թէ իւր ձայնը լսելի պիտի լինի և քաղաքաւ կանութիւնից պիտի ստանայ ինչ որ հայ պատգամաւորները գուր սպասում էին ստանալ արդարագատ ատենի մարդասի մարդասի իրութիւնից:

Ու ոք չէ կարող հաստատել թէ աղնիւ զդայմանքները անմատչելի են քաղաքականութեանը, բայց մի բան կարելի է համարձակ առել, այն է ոք քաղաքականութեան մէջ զդայմունքների վրայ միայն այն ժամանակ կարելի է յաջողութեամբ ներգործել, երբ ցոյց տրուի թէ պաշտպանուած գործը ոչ միայն ոչ ոքի համար վեասակար չէ, այլ ամէնի շահէրին համաձայն է: Այս վերջին տեսակետը իւրեան ուղեցոյց առնելով գործեց եւրոպական մամուլը, որի ընդհանուր կարծիքը ահա իսկոյն կաշխատեմ ամփոփել:

Հայստան աշխարհը, որ այսօր երկիք շրջապայ պետութիւնների՝ Ոոս պատանի, Պարսկան

տանի և թուրքիայի իշխանութեան ներքոյ է գոնվում, միշտ և հանապատ երկպառակութեան առարկայ է եղել այն բոլոր ազգերի համար որոնք յիշեալ պետութիւնների դերն են խաղացել հին դարերում։ Այս երկրով անցնում են Եւրոպայից Ասիա տանող հազորդակցութեան ամենակարծ ձանապարհները և այստեղ միանում են այն ձանապարհները որոնք մի քանի ծով իրարու հետ կապում են։ Այսպիսի կենտրոնական դիրք ունեցող երկիրը թէ խաղաղութեան և թէ պատերազմի ժամանակ մեծամեծ օգուտներ է խոստանում, և այս է պատճառը որ դրայի պետութիւնները յաճախ զէնքի են դիմել Հայաստանի տիրապետութեան համար, ինչպէս որ յաճախ արիւնով ներկել են մեր հայրենիքի դաշտերը հին աշխարհի և միջին դարերի աէրութիւնները, որոնք իշխում էին Պարսկաստանում, Բիւզանդիայում և Կովկասեան երկրում։ Առևտրական ընդարձակ հազորդակցութիւնների կենտրոն լինելով և ռազմագիտական կարեւոր կէտեր ներկայացնելով, Տաղագիտական կարեւոր կէտեր ներկայացնելով, Տաղագիտական միևնույն ժամանակ մեծ նշանակութիւն ունի իրեւ շտեմարան դրայի երկիր-

ների համար, որոնց նա միշտ հայի և ուրիշ բերքերի մեծ քանակութիւն է տալիս։ Հասկանալի է որ այս երեք տեսակէտներից առաջ՝ Հայաստանը պէտք է անդադար դժութիւնների պատճառ լինէր դրացի պիտութիւնների համար, որոնցից իւրաքանչւրը ձգտեցաւ միշտ եթէ ոչ ամբողջ երկրին տիրել գոնեանորա նշանաւոր մասը ձեռք բերել։ Յիշեալ պետութիւնների այս թշնամական յարաբերութիւնների առաջ առ այժմ նորանով առնուեցաւ, որ նոցանից իւրաքանչւրը Հայաստանի մէկ կամ միւս մասը գրաւեց, իսկ Թուրքիային ամենամեծ կտորը բաժին ընկաւ։

Այս կողմից Տաճկ Հայաստանը կարող է համեմատուիլ մի քանի եւրոպական երկրների հետ, որպիսի են Զուբիցերիան, Բէլգիան, Ռումանիան և այլն, որոնք նոյնպէս մեծ պետութիւնների մէջ են ընկած։ Միայն այստեղ այն զանազանութիւնը կայ, որ Եւրոպայում հնարդառան մի քանի սահմանակից պետութիւնների ոստիութեան առաջն առնել չէզոք ինքնավարական մարմններ կազմելով նոցա մէջ, որոնք ընդհանուր Եւրոպայի հովանաւորութեան ներ-

քյ ևն գտնվում։ իսկ Ասիայում մինչև այսօր այս միջոցը գեռ ոչ մի անգամ չգործադրուեցաւ։ Ահա այս պատճառովէ որ Տաճկ։ Հայաստանը և Ասիական ցամաքի վրայ իրարու դէմ մբյող ախտութիւնների միջազգային յարաբերութիւնները ներկայումն էիշա նոյն վիճակին մէջ ևն գտնվում, որի մէջ գտնվումէր Եւրոպան Աւստրիական խաղաղութիւնից առաջ։

Եւրոպայում քաղաքականութիւնը յաջողեցաւ ամենապատերազմասէր ժողովրդներին արուեստական միջոցով խաղաղ ու գործասէր ազգերի փոխել։ Անվերջ արիւնհեղութիւնների առաջն առնելու համար Եւրոպական քաղաքականութիւնը ոչ միայն խաղաղ ու չեղոք ինքնավարական մարմիններ սիրահ առեղծէր, այլ և խաղաղասէր, բարեկարգ ու աշխատասէր ժողովրդներ նոյն տէրութիւնների համար։

Այսպիսի հրաշալի փոխարկութեան օրինակ ներկայացնում են մեղ զու իցերացիք, որոնք երբեմն պատերազմասէր, անզուսպէ անհանգիստքնառութիւնն ունին, իսկ այժմ Եւրոպայի ամենից աշխատասէր ու խաղաղ ազգութիւնն էն։ Եթէ Եւրոպայում հարկաւորութիւն է հա-

մարուել չեղոք ինքնավարական մարմիններ կազմել և մինչև անդամ չեղոք կեանքի ընդունակ ժողովրդներ ստեղծել, ինչ արգելք կայ նոյն սկզբունքը գործադրելու և Ասիայում երբ տեսնում ենք որ Տաճկ։ Հայաստանն էլ նոյն պայմանների մէջ է գտնվում, իսկ հայ աղջր կարծես ստեղծուած է այդպիսի կեանքի համար։

Առաջին և զլիաւոր պայմաննը, որ Եւրոպական քաղաքականութիւնը աչքի առաջ ունեցաւ չեղոք քաղաքական մարմիններ կազմելու ժամանակ, այն էր, որ նորակազմ տէրութիւնը միջոց չունենայ ապագայում աշխարհակալութեան հետամուս լինիլ. Զուիցերիան, օրինակի համար, իւր անկախութեան առաջին ժամանակներում կարող էր այսպիսի կասկածներ յարուցանել քաղաքագէտ մարդկանց մոքում։ Բայց այսպիսի երկիւղ երբէք չէ կարելի սպասել Տաճկ։ Հայաստանի կողմից, որի ժողովուրդը յայտնի է իւր խաղաղասէր ու աշխատասէր բնաւորութեամբ, երկրագործութեան ու արհեատների վրայ ունեցած սիրով։ Զէ կարելի կարծել թէ մի ժողովուրդ, որ դարեւոր ժամանակներ պարապել է երկրագործութեամբ,

սիրել ու մշակել արհեստները և այնքան ընդունակութիւններ է ցոյց տուել վաճառականութեան մէջ, վեր կենայ յանկարծ աշխարհակալութեան ձգտութիւններ ցոյց տայ և իւր հզօր դրացիների խաղաղութիւնը վրդովի, որոնցից իւրաքանչիւրը առանձին առած՝ բաւական կը լինէր Տայ կ. Հայաստանը նուածելու:

Բայց մի կողմ թողնենք Երեք ոսոխ տէրութիւնների Հայաստանի ամենալաւ տեղերը գրաւելու յանկութիւնը, նոյն իսկ այդ պետութիւնների սահմանակցութիւնը, նոյա անընդիմական յարաբերութիւնները միմեանց հետ գրեթէ միշտ դանազան խնդիրներ, տարածայնութիւններ ու վէճեր են յարուցանում, որոնք վաղ թէ ուշ պատերազմով են լուծվում: Ուռաստանի և Թուրքիայի սահմանակցութիւնը Եւրոպայում, օրինակի Համար, այնքան վտանգաւոր է Համարուել ընդհանուր խաղաղութեան համար, որ Եւրոպական պետութիւնները ստիպուեցան այդ երկու տէրութիւնների մէջ անկախ թէեւ փոքրիկ տէրութիւններ ստեղծել, որոնց միջնորդութեամբ կարելի լինէր Երկու ոստիններին միմեանցից հեռացնել և անդադար

զէնքի զիմելու առիթը խլել նոցանից: Ահա այսպէս կազմուեցան Դանուբեան իշխանութիւնները: Եւ եթէ Եւրոպան կատարելապէս չհասու իւր նպատակին, եթէ այնուհետեւ էլ երկու ոստինները միջոց գտան միմեանց դէմ զէնք բարձրացնելու, դորա պատճառը ոչ այնքան սկզբունքի թերութեան մէջ պէտք է որոնել, որքան նորա անկատար գործադրութեան մէջ: Գանուբեան իշխանութիւնները բոլորովին արշեստական ճանապարհով են կազմուել և նոցասահմանները որոշելու ժամանակ ոչ ազդայնութեան սկզբունքը աչքի առաջ ունեցան և ոչ տեղական ժողովրդի շահերը, այլ լոկ կամայականութիւնը: Սերբիայի մի մասը մնաց Թուրքիայի և Աւստրիայի իշխանութեան ներքոյն Ռումանիայի մի մասը Հոնդարիայի իշխանութեան տակ և այն, և այս ի հարիկ չէր կարող չվրդովել ու չխռովել ինչպէս ազատութիւն գտնող՝ այսպէս և օտար Ծի տակ հեծող ժողովրդներին: Այս պատճառով անհիմն չի լինի կարծել, որ եթէ Դանուբեան չղոք տէրութիւնները կազմելու ժամանակ սերբիացոց և ռումանացոց ազդային ձգտութիւններին բաւա-

կանութիւնն արուած լինէր, Ոռոսաստանի և
թուրքիայի հետագայ պատերազմների առաջ,
կ'առնուէր:

Բայց քաղաքականութիւնը ստիպուած զըս-
նուեցաւ Եւրոպայում զանազան զիջողութիւն-
ներ անել Երբեմն թուրքիային, Երբեմն Ոռոսաս-
տանին, Երբեմն Աւստրիային, և այսպէսով չէզոք
ինքնավարական մարմինների սկզբունքը աղաւա-
ղեալ կամ անկատար կերպով իրականացրեց,
որով և փոխանակ տարաձայնութիւնների ա-
ռաջն առնելով՝ նորանոր պատերազմների դուռ
բաց արաւ հակառակորդ տէրութիւնների հա-
մար; Զէ կարելի առել թէ նոյն դժուարութիւնը
կըներկայանայ և Ասիայում, Եթէ Տաճկ. Հայաս-
տանից չէզոք Երկիր կազմուի; Այստեղ խնդիրը
այնպիսի Երկրի վրայ է, որի աննշան մասները
միայն միացելեն Ոռոսաստանի և Պարսկաստանի
հետ, այն ինչ Երկրի համարեա չորս հինգերոր-
դականը մնացելէ թուրքիայի իշխանութեան
ներքոյ: Բաւականէր լոկ թուրքիայի Հայաստա-
նից կազմել մի ինքնուրոյն չէզոք Երկիր. այդ
այնպիսի արդիւնք կը լինէր, որ լուռմն կը տար
Տաճկաստանի հայոց բոլոր ըղձերին և հեռու-

կը պահէր նոցա ամէն տեսակ աշխարհակալա-
կան գիտաւորութիւններից...

Գտնուելով Երեք տէրութիւնների մէջ և
միջազգային իրաւունքներով ապահոված լինե-
լով օտար արշաւանքներից, չէզոք Տաճկ. Հայաս-
տանը կարճ ժամանակում ինքն իւր մէջ այն-
քան զօրութիւն ու միջոցներ կը գտնի, որ կը
յաջողի ներքին խաղաղութիւնը ու բարօրու-
թիւնը վերականգնել: Արդիւնաբեր Երկիր լի-
նելով և իւր համար պէտք եղածից շատ աւելի
արտադրելով, միանգամայն և այնպիսի հաղոր-
դակցութեան ճանապարհներ ունենալով՝ որոնք
համաշխարհային նշանակութիւն ունին, և այն-
պիսի ժողովուրդ լինելով՝ որ յայնի է իւր աշ-
խատասիրութեամբ, վերին աստիճանի ճարատ-
րութեամբ ու հնարագիտութեամբ, Տաճկ.
Հայաստանը շուտով կը կարողանայ այնպիսի զի-
նուորական զօրութիւն կազմել, որ քուրդերի
և ուրիշ բարբարոս ցեղերի աւաղակութիւն-
ների առաջը կ'առնէ, որոնք մինչև այսօր ա-
մենամեծ արգելք են կրթութեան ու վաճառա-
կանութեան բարզաւաճմանը Փոքր Ասիայի մէջ:
Քաւական կը լինէր առ այժմ այդ աւազակ ցե-

ղերը զսպել և Նւրոպայի վաճառականութիւնը
Արևելքի հետ այնպիսի ընդարձակութիւն կը
ստանայ որ ոչ մի քաղաքական միջոց չէր կա-
րող տալ նորան: Տաճկ. Հայաստանի նման յար-
մար դիրք ունեցող երկրի մէջ քաղաքակրթա-
կան կարգեր հաստատել ոչ միայն կրնակաստեր
Եւրոպական վաճառականութեան զարգացմանը՝
նորանոր և ընդարձակ վաճառանոցներ բանալով
նորա համար, այլ և յիշեալ երկիրը քաղա-
քակրթութեան բուն կրդառնար և բարի օրի-
նակ շրջակայ ժողովրդների համար: Ինչ որ ոչ
մի Եւրոպական պետութիւն չի կարողանալ եր-
բէք անել՝ որքան էլ արիւն և գանձեր սպառէ,
Եւրոպան կարողէ դիւրութեամբ յաջողեցնել
Հայ ժողովրդի տոկուն աշխատասիրութեամբ որի
համար կարգն ու խաղաղութիւնը երկու թան-
դադին սկզբունքներ են: Եւ ով կարող է չհա-
մաձայնել որ Ասիայի քաղաքակրթութիւնը
կենսական խնդիր է Եւրոպայի խաղաղութեան
և նորա Շարժարութեան զարգացման համար,
որ քանի գնում նորանոր վաճառատեղիների
կարութիւնը զգում է:

Այս է մեզ համակրող պետութեան ընդ-

հանուր կարծիքը. սակայն եւրոպական և ոռու-
սական առաջագէմ մամուլը իւր մեծ թեր-
թերի բերանով ուղղափի ազատութիւն ու ան-
կախութիւն էր պահանջում Տաճկական Հայաս-
տանի համար: Թոյլ տուէք ինձ միայն մի կար-
ծիք առաջ բերել այսամլ. ահա ինչ էր գրում
Independance Belge լազիրը 1877 թուին:

«Այսպէս, օրինակ, Հայերի վերաբերու-
թեամբ, որոնք չարչարփում են տաճիկների ձեռ-
քից ոչ պակաս քան թէ բալիսնեան սլատոն-
ները, ասուել է թէ իբր ոռումները կամենում են
ձեռք բերել այդ երկիրը (Տաճկ. Հայաստանը)
որ ապահովացնեն իւրեանց ճանապարհը դէպէ
Հնդկաստան ի վկաս անգլիացոց շահերի: Դորանից
աւելի սխալ բան չկայ: Բայց աղատ Տաճկ.
Հայ աստանը քրիստոնեայ իշխանով), որ
յինի ոչ ոռու և ոչ անգլիացի, կը լինէր մի
ծշմարիտ յառաջադիմութիւն քաղաքակրթու-
թեան: Այդ օդտակար կը լինէր որչափ Ոռու-
սաստանի համար, նոյնափի և Անգլիայի հա-
մարք և ամբողջ մարդկութեան, կ'աւելացնենք
մենք կողմից:»

Այս չափով միայն կարողացանք առաջ

քերել այստեղ եւրոպական մամուլի խորհրդաւթեան իւնիւնները ջաճկի Հայաստանի ինքնավարութեան մասին։ Նորա պահանջները իսկապէս շատ աւելի ընդարձակ էին, ինչպէս յայտնի է անշուշտ այս գորոյցը իւրեանց ներկայութեամբ պատուող այն հանդիսականներին, որոնք հետեւելեն եւրոպական, նոյն իսկ ռուսական լրադրութեան վերջին երկու տարուայ ընթացքում։

Այժմ, խրախուսուած ձեր համակրութեամբ, որ անշուշտ կարող է միայն վերաբերուիլ մեղ զբաղեցնող առարկայի վսեմութեան, թոյլ տուելք ինձ լիւշեցնել ձեզ 1878 թուի յուլիսի 1-ը, այն նշանաւոր օրը, երբ մի մեծ ազդ յայտնեց մեզ իւր ջերմ համակրութիւնը։ Խօսք այն միտինդի մասին է որ տեղի ունեցաւ Լօնդոնում Հայոց ազգին համակրութիւն յայտնելու և նորա իրաւունքները պաշտպանելու նպաւտակով։

Երկուշաբթի յուլիսի 1-ին Լօնդոնի Անգլօ-Հայկական յանձնաժողովի հրաւերքով Երուսաղէմեան դահլիճում ժողովաւեցաւ մի որոշ թիւ այր և կին մարդոց այն նազարակով։

յայտնեն իւրեանց համակրութիւնը հայոց ազգին, միջնորդ լինին նորա համար ներկայ քաղաքական ձգնաժամկին և շնորհակալութիւն յայտնեն բրիտանական կառավարութեանը նորա տուած խոստմունքների համար՝ հոգալու որ վեհաժողովում պատշաճաւոր ուշադրութիւն դարձուի հայերի վիճակի վրայ։

Սակազահումէր Վեստմինստերի դեկանը կոմն Շեֆտորիւրու և կոմն Լօնդոնի աջակցութեամբ; Ներկայ եղողների մէջ, որոնց թիւը շատ մեծ էր, գտնվում էին Ֆիլարալուարի եպիսկոպոսը, պարլամենտի մի քանի անդամներ, Մանչեստրի հայոց քահանան և մօտ երեսուն մարդ հայ Մանչեստրից, Լօնդոնից և Լիվերպուլից։ Նախ կարդացուեցան մի քանի նամակներ որոնցով բացակայ լինելու համար ներողութիւն էին խնդրում Կէնսերբերիի արքեպիսկոպոսը, մարկիզ Բատը, Վեստմինստերի դուքսը և Վ. Ֆ. Ֆօրստերը։ Յիշուեցաւ նմանապէս որ սոյն անսակ նամակներ ստացուել են և Լօնդոնի, Վենետիկու քամբօրդի և Մանչեստրի եպիսկոպոսներից և շատ ուրիշ անձինքներից¹⁾։

1) Գասախօսելու միջոցին մենք առաջ բերինք

Ընթերցուած նամակները հետևեալ պարունակութեամբ էին.

Աիրելի պրօքեսոր բրայս.

Ես շատ ցաւումեմ որ ինձ անհնարին է
ներկայ գտնուել յօգուտ Հայաստանի քրիստո-
նեաների կաղմուած միամինդին։ Աթէ զուք ներ-
կայ գտնուիք այդ ժողովին, կը խնդրէի Ձեզ
Հայոց եկեղեցու այլտեղ գտնուած ներկայացու-
ցիչներին յայտնել իմ համակրութիւնը դէպի-
նոցա գործը և այն յոյսը, որ Աստուած կօրհնէ
այն անձանց թափած Ճիզը, որոնք աշխատում-
են բարուքել իւրեանց ազգի և եկեղեցու դրու-
թիւնը։

III. 4. է առ պուտը
Անձապատիւ պարս.

Կատ ցաւումեմ, որ գալով այս քաղաքը
մէկ կամ երկու օրով, ինձ անկարելի է ներկայ

զտնութել այն միտինդին, որ տեղի պէտք է ու
նենայ վաղը Կրուսատղէմեան դահլիճում այն
նպատակով որ մեր մեծ Երկրի համակրութիւնը
յայտնի այն ազնիւ և լուսաւորուած ազգին,
որ իւր վրայ իշխող արհամարհելի տաճիկների
կողմից աւելի լաւ վարմունքի է արժանի քան
մինչև այժմ։ Տայ Աստուած որ շուտով անցնի
առելի բռնակալութեան հպատակութեան ժա-
մանակը հայերի համար, մի միջոց գտնուի օգ-
նելու նոյս, որպէս զի ազատութեան և անկա-
խութեան աւելի մեծ աստիճանի համեն, ա-
ռանց անյնելու Ռուսատանի ձեռքք։ Կօրդ Բի-
կոնսֆիլիլը կարող է դործել այս մուքով։

Սիրելի միստեր Բրայս.

Ես երկիւղեմ կրում, որ գուցէ չկարողաւ նամ ներկայ գտնուիլ այն միտինդին որ գումարուելու է հայերին համակրութիւն յայտնելու համար: Ես՝ շատ ցաւումեմ այդ բանի համար, որովհետև շատ ուրախ կը լինէի եթէ կարողանայի նպաստել ընդհանուր ուշադրութիւնը զրաւելու այսպիսի մի աշխատասէր և

խաղաղ ազգի վրայ), որ այնպիսի պատմական անցեալ ունի և որ, վերջապէս, միայն այն է խնդրում որ ում իշխանութեան ներքյ և գտնուէր, նորան տային այն արտօնութիւնները, առանց որոնց կեանըը հաղեւ թէ տանելի կարող է համարուիլ:

Միստեր Յորստերը դրեւէր,
Սիրելի դեկան.

Դմ կարծիքով հայերը կատարելապէս արժանի են անգլիայոց համակրութեանը թէ իւրեանց պատմութեամբ և թէ իւրեանց ներկայ դրութեամբ; Կարծեմ չե կարելի կասկածել որ թուրքիայի վատ կառափարութիւնը շատ ասոր է, ոչ միայն թուրք աստիճանաւորների հալածանքների նկատմամբ, այլև և ոչինչ պաշտառութիւն չգտնելով քուրդերի յարձակմանքներից; Ես նմանապէս չեմ կասկածում թէ քանի որ այս ինպիրը անվճիռ է մնում, չե կարող վճռուել և Սրեւեան հարցը Ասիական Տաճականանում; Ես այն մարդկերանցից չեմ որոնք համարում են թէ անգլիական շահերը կամ

խումն ունին հայոց նահանգի դրութիւնից, բայց եթէ ես այդպէս մտածում լինէի, այն ժամանակ համոզուած կը լինէի որ վատ կառավարութիւնը մեծ գայթակղութիւն կը լինի Ուուսաստանի համար երկիրը ձեռք ձգելու և ոռւսաց ինտրիկներին մշտական մնունդ տալու:

Բայց մի կողմ թողնելով թէ արգեօր այս բոլորը ջշափումէ անգլիական շահերը թէ ոչ, այս անկասկած կարելի է ասել որ Անգլիայի պարտաւորութիւնն է քանի որ նա նպաստումէ չայաստանը Թիւքիայի իշխանութեան ներքոյ թողնելու, համոզել Բերլինի վեհաժողովը որ նա վստահ լինի որ այդ տիրապետութիւնը չելինելու Ճշման և անիշխանութեան խաւուրդ:

Վ. Ե. Առքուեր:

Կարդացուեցաւ նմանապէս հետեւեալ հեռագիրը որ ուղղուած էր Լոնդոնի հայկական յանձնաժողովի նախագահ պարոն Սէթ Արդարին:

Կալվաթա յուլիսի 1-ին

«Հնդկասանի, Պարսկաստանի և Կաղամադայի հայոց ժողովրդի առաջնորդ Կրիզորիս արքեպիկոսովոսից»:

«Անք ցանկանում ենք յայտնել մեր խորին երախսագիտութիւնը Անդիւային այն համակրութեան համար որ նա ցոյց է տալիս դէպի մեր հայրենիքը և մեր աղջի թշուառ դրութիւնը։ Մեծայօյս ենք, որ բրիտանական կառավարութիւնը կաշնատի քանի որ գեռ կարելի է, որ հայերին ինքնափարութիւն չնորհուի և ազատութիւն օտարի տիրապետութիւնից։ Հաղորդեցէք այս ուժ հարկն է։»

Վեստմինստերի դեկան, բազմելով նախագահական աթոռի վրայ, ասաց.

«Այս միտինդը մի կուսակցութեան գործ է, այլ արտայայտում է այն համակրութիւնը, որով բոլոր անդիւացիք պէտք է մասնակից լինին հայոց եկեղեցու և ազգի բախտին։ Հայոց եկեղեցին համարեա թէ առաջինը ազգային եկեղեցի դարձաւ և ունի մի քանի կարգէ դուրս առանձնութիւններ, որոնցով նա միակ է բոլոր քրիստոնէական եկեղեցիների շարքում։ Օրինակ, նա բոլոր եկեղեցիներից միակն է որ հետեւում է Նիկիոյ ժողովի հաւատի հանգանակին, պահպանելով շատ կարեւոր վճիռներ, որ միւս եկեղեցիները բարձի թողի արին և չկ լնդ ունում

շատ ուրիշ ծանրակշիռ վճիռներ, որ միւս եկեղեցիքը աւելացրին։ Նորա Աստուածաշունչը պարունակումէ իւր մէջ երկու գիրք հին կտակարանից և երկուսը նոր կտակարանից, որ ոչ մի ուրիշ եկեղեցի չունի։ Բացի այդ, հայ ազգը հին պատմական ազգ գոլով, նաև այն կողմից արժանի է մեր ուշագրութեանը, որ Թուրքիայի իշխանութեան ներքոյ գտնուած այն սակաւաթիւ քրիստոնեայ ազգութիւններից մէկն է, որոնք ինքնուրոյն մտաւոր զարգացումն ունին։ Յոյները ի հարկէ Թիւրքիայի քրիստոնեայ աղգութիւնների պարագլուխն են, բայց նոցանից յետոյ ամենայն իրաւամբ պէտք է գասել հայերին, որոնց արագ ըմբռնողութիւնը և թափանցիք խելքը մեծամեծ տեղեր են տալիս նոցամենուրեկը ուր հնար ունին այդ յատկութիւնները արտայայտելու։ Պարզ է որ չե կարելի արշամարհել և բարձի թողի անել այս ազգը առանց մեսաւելու մարդկաւթեան ընդհանուր շահերին։

Կոյս դրութիւնը, ի հարկէ, միակ կարող է համարուիլ այն բարգ և ծանրակշիռ ինդիրների կարգումը, որ ներկայացնում է մեզ տաճ-

կական կայսրութիւնը, և ահա սոյն իսկ բարւ դութեան և բազմակերպութեան պատճառով է որ արևելեան հարցը չե կարող որևէ կուսակցութեան նշանաբան դառնալ: Եթէ հայերը այս բոպէիս չեն դարձնում իրանց վրայ պետական անձանց ուշադրութիւնը, ապա ուրեմն մասնաւոր անձննք պարտաւոր են համակրութիւն ցոյց տալ նոյա: Ըստ երեսութիւն նամակութիւն առաջանաւում են ոչ այնքան վատ կառավարութիւնից, որքան վայրենի քուրդ ցեղերի յորձակմունքներից, որոնց տաճկական տէրութիւնը, ինչպէս և գուցէ ամենայն տէրութիւն այսպիսի հանգամանքներում; դժուար է համարում հնազանդութեան մէջ պահել. և մեր մէջ գտնուած հայերի (ինչպէս և նոյա անդլիական բարեկամների) գլխաւոր նպատակն այն է, որ այնպիսի միջոցներ գտնեն, որոնցով նոյա քաղաքակրթուած, մոռաւրապէս զարդացած և քրիստոնեայ հայրենակիցները ապահովուած լինին այդ տեսակ հարստահարութիւններից: (Ծափահարութիւն):

Պ. Սօրգուջը առաջարկեց ընդունել այն ուրոշումը, որ այս միտինդը չնորհակալութիւն

յայտնի Ն. Մ. թագուհու կառավարութեան, որ խոստացել է նոյա՝ քննել վեհաժողովում ասիական Տաճկաստանի հայոց խնդիրը, և Հայաստանում լինելիք վարչական բարեփոխութեան վերայ ուշադրութիւն դարձնել: «Առաջարկելով այս որոշումը, որ ներկայ հանգամանքում կարող է համարուիլ իբրև ընդհանուր հայոց ազգի անկեղծ չնորհակալութիւն դէպի Մեծ Բրիտանից ազգը, ես մասնաւոր շնորհակալութիւն կը յայտնեմ իմ այստեղի հայրենակիցների կողմից Անգլից այն նշանաւոր գործողներին, որոնք իրանց գրչով կամ խորհրդութով օգնեցին մեր ազգային գործին: Մենք կարող ենք ասել որ նոյա վեհանձն ջանքերի շնորհով առաջ անցաւ հայոց խնդիրը. և մենք նոյա շատ պարտական կը մնանք այն բարեյաջող արդինքի համար, որ սպասում ենք բերելինի վեհաժողովից: Երեք միլիոն հայ անհամբեր սրտով սպասում են բերլինում հաւաքուղարիսպագոսից կենաց նոր արշալոյս և երաշխաւորութիւն նոյա կենաց, ընչից, պատուոյ և սեպհականութեան ապահովութեան համար: Ժամանակ առ ժամանակ անդլիական լրագիրնեւ-

բում տպուած լուրերից գուք կարողացաք տես-
նել, որ մեր հայրենակիցների՝ քուրդերի երե-
սից քաշած վիշտերը դեռ շարունակվում են և
մինչև անդամ աւելանում օրէ ցօր: Այսօրուայ
առաւտօտեան լրագրում հրատարակուած է հե-
տեեալ պատմութիւնը այն նոր արհաւերքի մա-
սին, որ յիշեալ աւազակները հասցրել են վա-
նայ քրիստոնեանների գլխին:

«Ա անից ստացած մեր վերջին տեղեկու-
թիւնները բովանդակում էին իրանց մէջ քուր-
դերի այնտեղ կատարած սոսկալի չարագործու-
թիւնները: Այս տեսակ լուրեր մենք ստացել ենք
նաև Մուշից և Հայաստանի ուրիշ տեղերից:
Թուրքերը փակում են իրանց աչքերը այն բանի
վերայ որ կատարվում է իրանց ներկայութեանը
և այս պատճառով քուրդերն այժմ աւելի են
կատաղել, քան երբեւիցէ: Քրդական խումբերն
այնպէս են ամայացրել երկիրը, որ մի քանի տե-
ղերում սովէ երեսում և ժողովուրդն սկսում է
սովամահ լինել: Այս վայրենիները բազմաթիւ
սպանութիւններ են կատարում: Հայոց պատ-
րիարքը թոյլառութիւն խնդրեց Բերլին գնալու,
բայց նորա խնդիրը մերժուեցաւ: Կարնից տասն

անձինքներից բաղկացած մի պատգամաւորու-
թիւն է գնում Բերլին, որպէս զի այս իրողու-
թիւնները յայտնի վեհաժողովին:»

«Անկարելի է խօսքերով նկարագրել, թէ
ինչ մեծ բաւականութեամբ էին կարդում մեր
հայրենակիցները հայերին վերաբերեալ այն
ազնիւ խօսքերը, որ Շեֆտուրի, Գրենվիլ և
Կօրնարփոն լորդերի նման անձինք արտաքերեցին
լորդերի պալատում, և ինչ յոյսեր ծնեցրին նոցա
սրաերում այն միսիթարական խոստմոնքները,
որ նորին մեծութեան թագուհու կառավարու-
թիւնը տուել էր արտաքին գործերի գլխուոր
Խորհրդականի, լորդ Սալիսբիւրիի բերանով:
Հայերը յուսով են, որ վեհաժողովի լիազօր ներ-
կայացուցիչները իրանց դիրքին համապատասխան
խոհեմութեամբ կը պաշտպանեն ազգայնութեան
սկզբունքը իրեւ միակ միջոց արևելեան հարցի
լուծուելուն, և թուրքից զանազան ազգու-
թիւններին հաւասարաչափ բաժանելով այն
անհրաժեշտ բարեկարգութիւնները, որոնք հար-
կաւոր են նոցա շուտափոյթ վերածնութեան հա-
մար, կը հաստատեն և Կ'ապահովացնեն խաղա-
ղութեան տեսականութիւնը: Հայերը իրանց լե-

զուով, գրականութեամբ, պատմութեամբ,
կրօնով և սովորութիւններով այնպիսի մի որոշ
ազգութիւն են կազմում Տաճկաստանում, որ
նորա իրաւունք են համարում յուսալ ստա-
նալու վեհաժողովի ձեռքից յատուկ և իրանց
պահանջերին յարմար կազմակերպութիւն։ Խիստ
նշանաւոր է ազգերի պատմութեան մէջ այն, որ
Հայերը կարողացան դիմանալ այնքան բազմա-
թիւ և սարսափելը անցքերին, որ տեղի ունեցան
Արևելքում, և իրանց անկախութիւնը կորցնե-
լուց յետոյ, 5 դար շարունակ, պահպանել ամ-
բողջութեամբ իրանց ազգային բոլոր յատկու-
թիւնները, մինչդեռ նոցա հարեւանները անհե-
տացան այս աշխարհից և նոցա անուններն էլ
եղծուեցան ազգերի ցանկից։ Հաստատամու-
թիւնը, տոկունութիւնը, ազգայնութեան պահ-
պանութիւնը և Հայրենասիրութիւնը միշտ
Հայերի գերազանց յատկութիւններն են եղել,
որով և բացարդումէ նոցա հաստատուն սէրը
դէպի Հայրենի երկիրը, և այն, որ նոցա մեծ
մասը, չնայելով ամեն տեսակ թշուառութիւն-
ների, գեռ բնակումէ սրբազան Արարատի հո-
վիտներում։ Կոստանդնուպօլսոյ նախկին պատ-

րիարք արքեպիսկոպոս Խրիմեան Հայրիկին անգ-
լիական ժողովրդի և կառավարութեան ցցց
տուած համակրութիւնն ու ընդունելութիւնը
յուսալ են տալիս Հայերին, որ վեհաժողովում
Մեծ Բրիտանիայ ներկայացուցիչ նշանաւոր պե-
տական անձնները սրտանց հետամուտ կը լինին
նոցա գործին և եռանդով կը պաշտպաննեն նոցա
շահերը։ Միւս կողմից մենք պէտք է ուրախաւ
նանք, որ միւս տէրութեանց ներկայացուցիչներն
էլ բարեացակամ են մեր ազգին, և չունին
պատճառ հակառակելու նորին մեծութեան թա-
գուհու կառավարութեան, այլ, ընդհակառակին,
կարող են նաև օգնել նորան ձեռք բերելու
Հայերի համար նոցա թշուառութեանց դէմ
նոյն միջոցները, որ ձեռք բերուելու են միւս
պաշտոնական և յունական ցեղերի համար։

Հայաստանի լաւ վարչութիւնը, Հայերի ա-
զատութիւնը քուրդերի և տաճկական հարստա-
հարիչ և ապականուած վարչութեան իշխա-
նութիւնից, Հայերի կենաց, ընչեց և պատույ
ապահովութիւնը — ահա այն բարիքը, որնց
ձգտումէն մեր միլիոնաւոր Հայրենակիցները, և
այս է այն փառաւոր հարցը, որ խար հզօր ազ-

դեցութեամբ լրւծելու կոչուած է քրիստոնեայ
Անգլիան։ (Ծափահարութիւն։)

Կոմն Շեֆտորիւրին, համաձայնելով առաջ
ջարկուած որոշմանը, ասաց, թէ նոյն իսկ նորա
բացադրութեան ձեւ ցոյց է տալիս, որ միտինգը
ազատ է որևէ կուսակցական մաքից։ Նորա պաշ
հանջը խիստ իրաւացի, բոլորովին օրինաւոր և
շատ չափաւոր էր։ Այս այն ազգի ձայնն է,
որ ունի իւր առանձին լեզուն, իւր պատմու-
թիւնը, գրականութիւնը և եկեղեցին և որ
նշանաւոր է իւր աշխատասիրութեամբ, Տարպի-
կութեամբ և վաճառականութեամբ։ Երբ լորդ
Սալիսբիւրին պատասխանեց այն հարցերին, որ
առաջարկուել էին նորան այն մասին թէ ինչ
դժուարութիւններ կարող էին առաջ գալ՝ զա-
նազան երկրների մէջ ցրուած ազգերի օրէնս-
դրութեան նկատմամբ, նաև չշօշափեց մի կարևոր
կէտ, խկապէս այն, որ Տաճկաստանում գտնուող
հայերի թիւը համումէ մինչև 3, թերևս և
մինչեւ 4 միլիոնի (լսեցէք, լսեցէք)։ Այս այն
ազգութիւնն է, որ շատ աւելի բազմաթիւ է
քան հին յոյները կամ զուիցերացիք, որ կենա-
գանի մնաց ապրող ազգերի թւում, և օրինակ

կարող է լինել իւր շրջապատող աշխարհին։
Հայոց ազգը պահանջում է ինքնավարութիւն։
Նա ինդրում է վարուել իւր հետ համաձայն
այն ծրագրին, որ ներկայացրել է բերլինի վեհա-
ժողովին։ Եւրոպայի համար աւելի ապահով և
լւաւգոյն ձանապարհ չկայ, քան բազմացնել
Արևելքում զօրաւոր և անկախ թագաւորու-
թիւններ, որոնք ազատութիւն ունենալով՝ մե-
ծամեծ արդիւնքներ յառաջ կը բերէին ընդ-
հանուր մարդկութեան համար։ (Ծափահարու-
թիւն։) Սա ամենալաւ միջոցը կը լինէր ներկայ-
իսրայէլիակի, ուուսական զօրութեան դէմ (լսե-
ցէք, լսեցէք)։ Բայց արևելեան զանազան ազ-
գերին ազատութիւն և իրաւունք տալիս, հարկ
է կրօնական լիակատար ազատութիւնը պայման
դնել։ Տարբերութիւն չպէտք է լինի քրիստո-
նեաների, հրէաների և մահմետականների իրա-
ւունքների մէջ։ Նա (լորդ Շեֆտորիւրին) ու-
րախ եղաւ տեսնելով, որ վեհաժողովում այս
սկզբունքը Ֆրանսիայի լիազօր ներկայացուցչի
պի Վատինիոնի, յատուկ պաշտպանութեամբ
հաստատուեցաւ։ (Ծափահարութիւնն)։ Ես ստի-
պուած եմ ապնիւ լորդի վերջին խօսքերը առանց
ընթերցանութեան թողնել։

Որոշումը միաձայն ընդունուեցաւ:
 Կոմս կօրնարկան առաջարկեց հետևեալը.
 Ամստինդի կարծիքով, վարչական այն բարեփոխուա
 թիւնների հիմքը, որոնք կարող են երաշխաւու
 րութիւն համարուիլ քրիստոնեայ բնակիչների
 հետ արգար վարմունքի և չայտատանի բոլոր
 ցեղերի և կրօնների լաւ կառավարութեան հաւ
 մար, այդ հիմքը տեսնվում է այն յատակագծի
 մէջ, որ հայ պատգամառները բերլինում ներա
 կայացրել են վեհաժողովի զիտողութեանը, և
 որով խնդրվում է առանձին հայկական նահանգ
 կազմել այնպիսի տեղական հաստատութիւննեւ
 րով, որ բնակիչները կը կարողանան գտնէս բերել: Նա ասաց թէ վստահ է, որ ներկայ գըտա
 նուողների մէջ մի մարդ չի լնիլ, որ նախա
 գահի խօսքերին համաձայն չայց ազգայնու
 թեան հարցին պէտք եղած նշանակութիւնը
 չայտապահ: Հայտատանը նշանաւոր երկիր էր, և նորա
 բնակիչները նշանաւոր մարդիկ: Հայերն ունին
 իրանց գրականութիւնը, իրանց լեզուն, իրանց
 պատմութիւնը և, վերջապէս, իրանց ազգային
 անհատականութիւնը, որ դարեւոր պատերազմ
 ների և հալածանքների ժամանակ կուլ չգնաց:

յամանակակից հայոց անունը

(Ծափահարութիւն:) Իսկ ինչոր իրան է վերա-
 բերում, նա ամենեմն չի կարող հասկանալ, թէ
 ինչպէս եղաւ, որ նոցա ազգութիւնը բոլորովին
 չոչընչացաւ: Եթէ հուր ու սուրբ, անզութ-
 ձնշումներն ու անվերջ հալածումներն կարող
 էին ազգութեան ամենափոքրիկ հետքերը ջնջել,
 ուրեմն դոքա արդէն բաւականից աւելի վիճա-
 կու ել են հայերին: Բայց այսօր ցոյց արուեցաւ
 թէ ինչքան բազմաթիւ են նոքա, ինչպէս նշա-
 նաւոր են իրանց վաճառականութեամբ, իրանց
 աշխատասիրութեամբ, իրանց խաղաղ սովորու-
 թիւններով, մի խօսքով, այն ամեն բանով,
 որ մի ազգի ընդունակ է անում ինքն իրան և
 իւր գործերը կառավարելու: Մի ազգ, որ չնայե-
 լով իւր քաշած նեղութիւններին՝ երկար տա-
 րիների ընթացքում պահպանեց իւր անհա-
 տականութիւնը, օգնութեան արժանի է: (Ծա-
 փահարութիւն:) Բայց եթէ այս ազգի համար
 երբ և իցէ փորձութեան և վտանգի ժամանակ է
 եղել, այդ այժմ իսկ է: Բոլորն ինչ որ շրջապա-
 տում էր նորան, այսպէս ասել, քանդուել է:
 Բ. Դրան կենտրոնական իշխանութիւնը, որ ամե-
 նայաջող հանգամանքներում խիստ քիչ ներ-

գործեց յօգուտ հայերին, այժմ այնչափ թուշացելէ, որ հազիւ թէ կարելի լինի նորա գոյութեանը հաւատ ընծայել: Ամբողջ երկիրը միքաղաքական և վարչական խաօսէ ներկայացնում այն բոլոր թշուառութիւններով, որոնք հետեւումեն այսպիսի դրութիւններին: Եթէ հաւատանք բերլինից անդադար եկող տեղեկութիւններին, օսմաննեան կայսրութիւնը քայլայուելուէ: Նա ոչընչանումէ, և նոքա կամայակամայ պէտք է խոստովաննեն այս իրողութիւնը: (Լսեցէր, լսեցէր:) Նա կրկնումէ, թէ նոքա պէտք է խոստովաննեն, որ Տաճկաստանը բաժանվում է այնպէս ինչպէս բաժանուեցաւ լեհաստանը անցեալ գարում: (Լսեցէր): Այս դրութեան մէջ ինչպէս պէտք է լինի հայոց բարեկամների գործելու եղանակը: Նա յայտնեց այժմ, ինչպէս յայտնելէր արդէն ուրիշ շատ հանգամանքներում, որ գլխաւոր կէալ, թէ հայերի և թէ ամբողջ օսմաննեան կայսրութեան վերաբերմամբ, այն պիտի լինի որ առաջեկայ կարգադրութիւնների մէջ պէտք է աշխատուի ոչ թէ այժմեան դժուարութեան ժամանակաւոր բարձման հասնելու, այլ մի այնպիսի դրութեան, որ ապա-

գայ քաղաքականութեան համար հաստատուն հիմք լինէր (լսեցէր, լսեցէր), այնքան զօրաւոր և հաստատուն, որքան արևելեան արդի կացութիւնը հնարաւոր կ'անի: Բայց ո՞ւր կարելի է գտնել այսպիսի հաստատուն դրութեան համար հարկաւոր եղած պայմանները: Ի հարկէ ոչ թէ թուրքերի մէջ. նոցա ժամանակն անց է կացել: (Լսեցէր:) Նոյնպէս չի կարելի և վայրենի քուրդերի մէջ գտնել: Ի զուր կը լինէր նոցա մէջ քաղաքակրթութիւն կամ քաղաքակրթութեան պառուներ որոնել: Նա կարծումէ թէ պետական մարդիկը այդ պայմանները պիտի որոնեն այն ազգերի մէջ, որոնք հայերի նման իրանց քաշած դարեւոր նեղութիւններով ցոյց տուին) թէ բաւական տոկուն ու դիմաց կուն են, և թէ ընդունակ են կանգնելու այն դիրքի վերայ, որ մենք ցանկանում ենք նոցա համար: Նա գիտէ, որ երբեմն ասում են, թէ հայերը ապականուած են, թէ նոքա մոլութիւններ ունին, որոնցից հիւսիսային փարիսեցիւները իրանց ազատ են համարում: (Ծիծաղ:) Բայց պատասխանը պարզէ ինչպէս ցերեկուայլցար: — Մի ազգ, որ դարերով ձնշուած և փո-

շու մէջ ընկած է եղել, այնպէս որ եթէ նորա զարմանալի կենսականութիւնը և անդրգուելի վստահութիւնը եղած չլինէին, հաղիւթէ կը մնային նորա կրօնի և ազգութեան հետքերը, այսպիսի աղդ ամենայն ժամանակ արժանի է քիչ թէ շատ ներօղամտութեան: Բայց նա հաստատումէ, որ հայոց ազգը ամեն տեսակ նեղութիւններ կրելով՝ միշտ իրաւունք է ունեցել անգլիացիների համակրութիւնն ու օդնութիւնը վայելելու: (Ծափահարութիւն:) Ինչպէս որ հինգերեղմաններում ըստ վաղեմի աւանդութեան ճրագները դարերով վառ էին մնում, այսպէս էլ կարելի է որ, երբ աղատութիւնը կը վերադարձուի այս հին և յարդանաց արժանի ազգին, առաջուայ օրերի լոյսը նորից կ'արծարծուի և կը լուսաւորի ոչ միայն նորա սեպհական կեանքը, այլև շրջապատող ազգերի կեանքը: (Ծափահարութիւն:) Աթէ նա հասկանումէ հայերի պահանջները, որոնք, իւր կարծիքով, խիստ չափաւոր են, նոքա խնդրում են միայն այն աստիճանի ինքնօրինութիւն և ինքնակառավարութիւն, որ համապատասխանում է երկրի ժամանակի ներկայ հանգամանկներին: Նա կար-

գաց այն տեղեկագիրը, որ, ինչպէս ինքը կարծումէ, ներկայացու եցաւ բերլինի վեհաժողովին և որ բացատրում էր հայերի իդձերը խիստ բարեխիղճ և չափաւոր եղանակով, և նա շտարակուսեցաւ ներկայացնել այժմ այդ առաջարկութիւնը, որ ամենքը կարող են ընդունել, առանց հարկադրուելու նորա բոլոր մանրամասնութիւններին էլ համաձայնելու: Նա մեծ յոյս ունի, որ այս միտինգում արտայայտուած համակրական և կարեկցական ցոյցերը ապարդիւն չեն անց կենալ, և թէ ինչպէս երբեմն Արարատը, որի գագաթների շուրջը հաւաքուել են քրիստոնէական եկեղեցու այնքան աւանդութիւններն ու զրոյցները, և որի ստորոտում գտնվում են ոչ մի կամ երկու, այլ բազմաթիւ ազգեր, իրան շրջապատող ջրհեղեղեց բարձրացաւ և պահպանեց խոստումներով լի տապանը, այսպէս էլ նա յոյս ունի, որ մերձաւոր ապագայում նոյն ինքն Հայաստանը կերպոն կը դառնայ շրջապատող բազմաթիւ ազգերի քաղաքակրթութեան և բարօրութեան: (Ծափահարութիւն:) Նա պնդեց այս մոքի մասին երկու պատճառներով, նախ՝ որովհետև Անգլիան—ինքը սիրելէ

աղասառութիւնը, վայելելէ նորան և յաճախ ուշ
րիշ ազգերին է շնորհել — ցանկանումէ, որ
չափ որ հնար է, անկախութիւնն ու ինքնազմա-
րութիւնը վերադարձնել այն հին ազգին, որ
այնքան տառապանքներ է կրել և իւր արիու-
թեամբ իրան արժանի է կացուցել ազատու-
թեան, իսկ երկրորդ՝ այս կերպով նոքա օրի-
նաւոր սահման կը դնէին ռուսաց՝ այս երկրի
վերայ ունեցած՝ անօրինակ ազգեցութեան տա-
րածուելուն։ Ես, ՚ի հարկէ, ենթարկուած չեմ,
ինչպէս իմ բարեկամներից մի քանիսը, ու ու-
սօ ջօր ասած տարածուած հիւանդութեանը։
(Ծիծաղ։) Շատ քիչ քաղաքական հարցեր կան,
որոնց նշանակութիւնը, իմ կարծիքով, այսքան
մեծացրած լինէր։ Բայց մի և նոյն ժամանակ
ապուշ և անխելք կը համարեմ այն մնարդուն,
որ կ'աշխատի մերժել Ռուսիոյ Արևելքումն
ունեցած մեծ և անպատշաճ ազգեցութիւնն
ու զօրութիւնը։ Ես կը ցանկայի բոլոր ուժերը
հաւասարակշեռ տեսնել ինչպէս Յերոպայում,
նշնպէս և Արևելքում։ Բայց պէտք է ամիշտ
յիշել, որ երկու միջոց կայ այս բանին հաս-
նելու։ Նոցանից մինը բռնի է և, արնչպէտ ես

կարծումեմ, ՚ի զուր, իսկ միւսը բնական և այս
պատճառով էլ օրինաւոր։ Քանի որ զուք բնու-
թեան համաձայն էք դործում՝ ամենակարող
էք, իսկ նորան հակառակ վարուելով՝ ամեթա-
պարտ կը լինէք և անյաջող։ Դէպէերին կարելի
է ուղղութիւն տալ, բայց ազգել նոցա վերայ
անկարելի է։ (Լսեցէք, լսեցէք։) Զի կարելի պատ-
մութեան ընթայըը դադարեցնել, նորա կառքը
յառաջ է զնում և վշրում ամենքին, որոնք
կամենումէն գէմ կենալ նորան, և այն քաղա-
քականութիւնը, որին նոքա պաշտպանում են։
Միւս կողմից, եթէ զուք որոնում էք այնպիսի
տարրեր, որոնք պարունակումէն իրանց մէջ ազ-
գերի ոյժը, հաստատութիւնը և ազագայ բա-
րօրութիւնը գուք դորանով կը ստեղծէք մի
բան, որ՝ մինչև անդամ մեր անհաստատ ու
փոփոխական աշխարհում, կը խոստանայ մի նշա-
նակեալ ժամանակամիջոց դիմանալ։ Այս է,
կարծեմ, ծշմարիտ քաղաքականութիւնը, որ
իւրաքանչեւր նախարար և քաղաքադէտ, աշ-
խարհական կամ հոգեւորական պէտք է պահ-
պանէ և պաշտպանէ։ Արևելքի ամենակարևոր
բարեփոխութիւնների մէջ, որոնց չե կարելի

կանգնեցնել կամ դիմադրել, որոնեցէք այն պիսի պայմաններ, որոնք հաստատուն և տեաւ կան հիմք կը դառնան, նոցա մէջ է պարունակավում, իմ կարծիքով, հայոց ազգի հանաւառութիւնը և պահպանութիւնը: (Այս խօսքերին մեր ունինդիրները ծափահարումեն): Գաղցր է ինձ յայտնել որ այս խօսքերը բարձր ծափահարութիւնով ընդունեց և անգլիական հասաւրակութիւնը: (Երկնակի ծափահարութիւններ):

Սէր Զօն Քեննառվէյ, բարօնէտ) խորհրդաւրանի անդամն ասաց թէ ինքը չէ պատրաստուած այս գէպքի համար խօսելու, բայց չկարողաւ ուշագրութիւն չդարձնել նախագահի հրաւերի վերայ: Այն դոյջն օգնութիւնը, որ նա կարողաւ ցոյց տալ հայերին, օգնելով նոցա իւրեանց խնդիրը ներկայանելու կառաւ վարութեան և սորա միջոցով էլ վեհաժողովին և Եւրոպային, որ բախտութեամբ կատարեց: Նա խկոյն ըմբանեց, որ հայոց գործը պէտք է հեռացնել քաղաքական կուսակցութիւնների առարկեց, և ջանաց հանելու այս նպատակին: Անցեաւ ամարութաղաքական յուղմունքների ժամանակաշրջանուն հետ չէր այս բանը, խկայժմ

գործը բոլորովն ուրիշ վիճակի մէջ է: Զատկից տռաջ երբ պ. Բրայսի տունը հաւաքուեցան, նոր էր ստորագրուել Սահ-Ստեֆանոի դաշնաւդրութիւնը, որով հայերը պէտք էր Ռուսիոյ պաշտպանութեան ներքեւ մտնէին: Ոյժմի ըստ երեսութիւն, նոցա կը յաջողութիւն աւելի լաւ գրութեան հաննելու, որի համար և խնդրումէ նա ըստունել իւր անկեղծ նորհաւորութիւնը: Նուրան մեծ բաւականութիւն է պատճառում այս առաջարկութեան պաշտպանութիւնը:

Անդոնի հայոց մասնաժողովի նախագահ պ. Փանոսեանը առաջ աՄենք պարագ նկը համարում Անգլիայում բնակուող հայերի կողմից ջերմ ու անկեղծ նորհակալութիւն յայնելու այս ժողովին և ամբողջ անգլիական ազգին նոյս մասնակիցներեան և իսրեկյութեան այն բազմաթիւ նշանների համար որոնք ցոյց տռեն մեր աղջային գործի նկատմամբ: Մենք չենք կամ մենում խօսել այս միտինդի նպատակի վերայ: Որ գումարել են մեր անգլիական բարեկամները, և ոչ մեր հայերնակիցների հայսաստանում կրած գարեւոց տառապանքները մի առ մի թուել: Բայց կաշիրտանք մի քանի խօսքով բացատրել

թէ ինչումն է հայոց աղդի պահանջն ու իղձը
այս հանդիսաւոր բոպէին, երբ ամբողջ Եւրո-
պայի ուշադրութիւնը դարձելէ այն վեհ ժո-
ղովի վերայ, որ իւր նստեն ունի բերլինում։
Ի՞նչ է որ հայերը անհանդիստ խնդրում են
Եւրոպայից. այն, որ նոցա հետ հաւասար ար-
գարութեամբ վարուին, և որ նոցա ևս տրուին
նոյն իրաւունքները, որ տրվում են Յսմանեան
կայսրութեան միւս քրիստոնեաներին։ Ի՞նչ է
հարկաւոր հայերին և ի՞նչ են ցանկանում նոքա.
այն, որ լաւ և հաստատուն կառավարութիւն
սահմանուի իրանց երկրում, մի տեսակ տեղական
ինքնավարութիւն սուլթանի գերիշխանութեան
ներքոյ և եւրոպական տէրութիւնների երաշ-
խաւորութեամբ։ Նոքա չեն կամենում անկախ-
լինել Տաճկաստանից, այլ միայն կառավարել
իրանց սեպհական գործերը՝ վճարելով սուլթա-
նին սահմանեալ հարկը։ Մի խօսքով, նոքա կա-
մենում են, որ Հայաստանը կառավարուի հայերի
ձեռքով, և այս, մեր կարծիքով, միակ միջոցն
է, որ կարողէ երաշխաւոր լինել ապագայ խա-
ղաղութեան և բարօրութեան։ Մենք շատ լաւ
ենք իմանում, որ բաւական չէ մեր ցաւերը

յայանել Եւրոպային և այս կամ այն կառա-
վարութեանը խնդրել, բայց մենք պատրաստ ենք
ապացուցանելու, որ Եւրոպայի և մանաւանդ
Տաճկաստանի համար շահա էտ կը լինէր այս-
պիսի մի բարեկարգութիւն մացնել Հայաստանի
մէջ։ Երկու դիմաւոր կէտեր կան, որոնց վրայ ես
համարձակում եմ դարձնել ձեր ուշադրու-
թիւնը։ Կախ՝ ի՞նչ վիճակի մէջ կ'ընինի Հայաս-
տանը։ Եթէ Եւրոպան դատապարտի նորան մնալ
այժմեան թշուառ զրութեան մէջ։ Պարզէ,
որ քրիստոնեայ քնակիչները՝ չունենալով կեամքի
և սեպհականութեան ապահովութիւն՝ կը գաղ-
թիւն դրացի երկիրներ, երկրագործութիւնը ե-
րեսի վերայ կը մնայ, մի խօսքով, երկիրը կ'ա-
մայանայ։ Միւս կողմից, մենք վստահ ենք, որ՝
եթէ արդար և հաստատուն վարչութիւն սահ-
մանուի Հայաստանում՝ երկիրը անմիջապէս կ'ը-
սպարանափոխ կը լինի։ Այս բոպէիս բուն Հայաս-
տանում մէկեկէս միլիոն հայեր կան։ Բազմա-
թիւ գաղթականների վերադարձը շուտով կը
մէծացնի այս թիւը։ Վաճառականութիւնն,
արհեստներն ու երկրագործութիւնը արագ կը
ծաղկեն քրիստոնեանների խելացի մրցման շնոր-

Հով նոցա երկրի բնական հարսառութիւնները կը
պարզանան: Շատ հաւանական է, որ այնտեղ
կ'երեւն նաև եւրոպական գաղթականներ. այս
պիսով Հայաստանը կը դառնայ սուլթանի ամեւ
նօծաղիւալ նահանգներից մինը: և նորա նշաւ
նակութիւնը՝ քաղաքական անսակէտից՝ չի մնալ
անուշադիր եւրոպացի քաղաքագէտների կորա
վահառութիւնից: Ահա այն հանկութիւնը, որի
լրականացման մասին այնքան եռանդով խընդ
րում են Հայերը, և Հաւասացած են, որ իւ
րանց երկրի վերակենդանութիւնը միայն Հայ
կական տարրերի միջոցով կարող է կատարուել:
— Անք կարող ենք ասել նաև, որ այսպիսի մի
փոխութիւն հածելի կը լնի և ժուրքերին,
որոնք քրիստոնեաններից ոչ պակաս տառապում
են տաճկական պաշտօնեանների անկարգութիւնից
և երկրի թշուառութիւնից: Վայելով այս
ազատ երկրում ամենաքաղաքակիրթ և լուսա
ւորուած համարակութեան բոլոր բարիքը՝ չենք
կարող չմտածել մեր Հայրենակիցների կրած
վշտերի վերայ, և մեր առեւտրական պարագա
մունքների մէջն անգամ պարոք ենք Համա
րում, իբրև մարդ և իբրև Հայ, պաշտպանել

նոցա գործը, և ինդրել այս մեծ և մեծաւ
հոգի աէրութեան կարեկյութիւնն ու բարոյաւ
կան օժանդակութիւնը: Նթէ մի մարդ, ուր որ
էլ գննուի մի որևէ իցէ ազգի ծգնաժամին ձեռ
քից եկած օդնութիւնը չցոյց տայ իւր ազ
գային գործին, այն միջոցին երբ միւսները սկա
տերագմեն մղում և իրանց կեանքը զոհում
նորա համար, այն մարդու, մեր կարծիքով,
գուրի է մարդասիրական և ազգանիրական որևէ
զգացմունքից: Այն մեծ համակրութիւնը, որ
անգլիական կառավարութիւնն ու ժողովարդը
ցոյց տուին մեր գործին, յօյսէ տալիս մեզ որ
նորին մեծութեան թագուհու լիազօր պատ
գամաւորները կը պաշտպանեն նորան վեհաժողո
վում՝ համելով արգարութեան այն չափին,
որին, կարծում ենք, իրաւոնք ունինք: (Յա
փահարութիւն:)

Գիբրալտարի և վիսկոպոն ասաց, «Ես մեծ
ուրախութեամբ վեր եմ կինում՝ պաշտպանե
լու այս առաջարկութիւնը: Ամենայն քրիստո
նեայ պարտական է Համակրել Հայոց ազգի վի
ճակին, թէ կուզ! Հենց միայն այն պատճա
ռով, որ նոցա մէջ հաստատու եցաւ առաջին

Քրիստոնէական եկեղեցին: Հայոց ազգը նախնի
դարերում բազմաթիւ աթոյեաններ տուաւ խաչի
համար և շատ քաջ մարտիրոսներ: Անդիլացի-
ները պարտաւոր են կարեկցելու հայերին այն
բարեկամական յարաբերութիւնների համար,
որ մենք ունեցանք նոցա հետ չնդիսաստանում:
Իմ մէջ յատկապէս համակրութիւն զարթե-
ցաւ դէպի նոցա վիճակը այն տեսակցութեամբ,
որ սորանից երեք տարի առաջ ունեցայ կոս-
տանդնութօլուսումն հայոց պատրիարքի հետ: Երբ
ես պատրաստվումէի մեկնել այս քաղաքից՝
լսեցի, թէ իմ կողմից հայոց պատրիարքին ևս
այցելութիւն է սպասվում, ինչպէս և այցելել
էի յունաց պատրիարքին: Այս բանը լսելով
պէտք եղած կարգադրութիւններն արի մեր
տեսակցութեան համար, և անդիլական երեց-
ների ընկերակցութեամբ գնացի պատրիարքի
բնակարանը, ուր սիրալիր ընդունելութիւն գտայ
նորանից և նորա հոգևորականներից: Բարեկա-
մական փոխադարձ խօսքեր ասելուց յետոյ՝
պատրիարքը մի բաւական երկար ճառ խօսեց:
Նա սկզբում աշխատեց բայցադրել այն մի քանի
կասկածները, որ նորա կարծիքով կարող էի

ունենալ նորա եկեղեցու ու զղափառութեան
մասին: Նա հաւատացած է, որ նոքա հաստատ
են մնում սկզբնական վարդապետութեան վե-
րայ: ԱՄեր մէջ, ասաց նա, հիմնական ճշմար-
տութիւնը մնաց անարատ, մեր կրօնը քաղ-
կեդոնի ժողովից առաջ տիրապետած ընդ-
հանրական եկեղեցու կրօնն է, եթէ գտնվումէ
որևէ տարբերութիւն մեր և միւս քրիստոնէից
եկեղեցիների մէջ, այն էլ բառերի մէջ է և ոչ
խկութեան, և, ինչպէս ուրիշ շատ ասաուա-
ծաբանական անհամաձայնութիւններ, մուգ-
խօսքերի զործածութիւնից է ծագում: Մեր եկե-
ղեցին պահպանել է նոյնպէս նախնական սովո-
րութիւնները, այսպէս օրինակի համար, նա-
իրաւունք է տալիս աշխարհականներին մասնա-
կցելու հոգեօրականների, եպիսկոպոսների և
պատրիարքների ընտրութեանը: Բացի սորանից,
ես պարծենալով պէտք է առեմ, որ մեր մէջ
թաղաւորումն վայեմի վարքութարքը, ընտա-
նեկան կեսնքի մաքրութիւնը, համեստութիւնը
և յարգանք դէպի ծերերը: Յետոյ պատրիարքը
յիշեց իւր ազդի երկու յատկութիւնների մաս-
սին էլ, որոնք, նորա կարծիքով, անդիլացու

Հաւանութեան և կարեկցութեան արժանի են:
 «Անք յայտնի ենք, ասաց նա, մեր ներսուա-
 մուութեամբ դէպի ուրիշ եկեղեցիները: Անք
 հետեւում ենք Անգլիոյ օրինակին, որ պաշտպա-
 նումէ կրթութիւնն ու լուսաւորութիւնը:» Նորա
 վերջին խօսքերն եղան, «Անք կարօտ ենք զօ-
 րելների օգնութեանը: Անգլիան միշտ ցոյցէ
 տուել մեզ իւր վեհանձն պաշտպանութիւնը,
 կը յուսանք որ նա այժմ ևս չե կրկիլ մեզ
 այդ պաշտպանութիւնից: Երբ ես այս տեսակա-
 ցութիւնը ունեցայ պատրիարքի հետ, երբէք
 չեի երեակայում, որ նորա Անգլիայից լանգրած
 այս պաշտպանութիւնը այսքան շուտ և այսքան
 շատ հարկաւոր լինէր, և թէ ես ինքս անդա-
 դար կրկնելու եմ այս լանգիրը անգլիացիներին
 հրապարակական միտինգներամ, ինչպէս այսօր:»
 Այն բոլոր բաներից որ ես տեսայ և լսեցի Ա-
 րեւելքում, եղակացրի որ ամպեր են հաւաք-
 վում, բայց երբէք չեի սկսառում, որ փոթորիկն
 այսպէս շուտ բարձրանար: Եթի ճշնաժամը հա-
 սաւ, բոլոր քրիստոնեացը անշուշտ յայս ունէին,
 որ շուտով պայծառ աւուր արշալոյս կը ծագի
 բազմաթիւ տառապով ազգերի համար, և թէ

Անգլիան, հաւառարիմ մնալով իւր սկզբուն-
 քին, օգնութեան ձեռք կը հասցնի ազատու-
 թեան և բարեկարգութեան դործին: Մի քանի
 ժամանակ մենք ստիպուած եղանք մեր յայսը
 կտրել, անվատահութիւնն ու վրդովմանքը մեզ
 մի քանի ժամանակ՝ արգելք եղան հետեւու-
 մեր աւանդական քաղաքականութեանը, այ-
 սինքն, ազատել Ճնշուածներին և վրէժիմնդիր
 լինել անպատուածների համար: Բայց հազե-
 թէ մեծ պետութիւնների ներկայացուցիչները
 երես առ երես պատահեցան վեհաժողովում որ
 այս անվատահութեան և վրդովման զգացմոնքը
 անհետացաւ, և մենք այդ ախնհարութեան և
 յուզման ժամանակի մերայ յետ ենք նայում
 իբրև մի չար Ճիւազի մերայ, որ գիշերուան
 մթութեան մէջ վրդովումէր մեր հանգստու-
 թիւնը, խաւարում մեր միտքը և ի գերեւ հա-
 նում մեր գործունէութիւնը: Այժմ մենք
 մերստին սկսում ենք աղատ շունչ քաշել, այժմ
 մերստին կարող ենք ներգործել մեր ամենաըն-
 տիր, ազնիւ ու վեհաժողութիւնների համա-
 ձայն: Բացի ոգեսրուողներից ոչ ոք չեր կարող,
 ի հարկէ, սկսուել որ Անգլիան պաշտպան հան-

դիսանար աշխարհի ամէն անկիւնում տառաւ-
պող ժողովրդներին, բայց և միւս կողմից՝ միան
ցած ոգիք կարողէին ցանկալ, որ մենք նեղ և
եսական ազգայնութեան շրջանից չդուրս գայինք:
Մենք Եւրոպիոյ ազատութեան համար բողոքե-
ցինք Նապոլէոն մեծի դէմ. մենք Յունաստանին
ազատութիւն և ինքնավարութիւն տուինք.
Եթէ մենք նիւթական օդնութիւն չտուինք իւ-
տալիոյ, նա գոնէ ունեցաւ մեր բարոյական
պաշտպանութիւնը իւր վերջին յաղթական
պատերազմում, որ մղեց միութեան համար:
Մենք միշտ մեր պարտականութիւնն էինք հա-
մարում աշխատել, որ տիկարի հետ արդարու-
թեամբ վարուին և հարստահարուողը բոնաւո-
րից պաշտպանուի: Ամենայն հայրենասէր, որ
պարզելէ ազգային անկախութեան դրոշակը,
սովորած է եղել մեր մշտական քաղաքականու-
թիւնից Անգլիոյ վերայ նայել իրեւ այնպիսի
երկրի վերայ, ուր նա անպատճառ կը գտնի եթէ
ոչ իսկապէս ջերմ օդնութիւն, գոնէ կարեկցու-
թիւն, և ուր ձախող դէպրում կարողէ ու-
նենալ ապատանարան և սիրալիր ընդունելու-
թիւն: Համարելով թէ մինչև այժմ էլ այս է

մեր քաղաքականութիւնը՝ հայերը այս բռպէին
մեզ են զիմում, և ևս հաւատացած եմ, որ
ազատութեան իւրաքանչիւր պաշտպանը, իւրա-
քանչիւր Ճշմարիտ անդիւցի ցանկանումէ, որ
մեր կառավարութիւնը յսրմար բոպէին պաշտ-
պանի այս աշխատասէր և խազաղասէր ազգի
հարցը Եւրոպական մեծ ժողովում, որ այժմ
հաւաքուել է Յերլինում:

¶. Անդրէասեան ասայ. այն ուրախու-
թիւն է ինձ համար այս միախնդի կողմից անկեղծ
շնորհակալութիւն առաջարկել բարձրապատիւ-
նախագահին, Վեստմինստրի տեսչն, իւր նա-
խագահութեան համար: Մենք հայերս մեծ
պատիւ ենք համարում մեզ, որ անդիւցոց
կարեկցութեան այս արտայայտութիւնները լի-
նումեն ան յարկի տակ, որի հետ կապուած են
բազմաթիւ պատմական և կրօնական յիշատակ-
ներ, և որ այս ժողովի նախագահն այնպիսի մի
անձն է, որի ձայնը միշտ լսելի է լինում երբ
խօսքը ազատութեան պաշտպանութեան համար
է և որի մշտական կարեկցութիւնը դէպի մարդ-
կութեան տառապեալ մասը՝ թանգագին է ա-
նում նորան անդիւցոց բոլոր դասակարգերին:

իսկ ներկայ դէտքում նաև բոլոր հայերին։ Սենք
շնորհակալութիւն ենք մատուցանում նորան և
մեր անգլիացի բոլոր բարեկամներին։ որ այս փորա-
ձութեան ժամկե մեզ կարեկցեցին։ մենք չնորա-
հակալ ենք նոցա իրանց պաշտպանութեան հա-
մար, որ ապագայում մեզ աւելի ևս հարկաց
ըորութելում է, և որ, յոյս ունինք զլանութուցն
մեզ։ Բոլոր սրտանց շնորհակալութիւն ենք յայռա-
նում նախագահին և մեր բոլոր բարեկամներին։
Ծր. Օհանեան ասոյ։ «Ես կամենում եմ
պաշտպանութիւն բարեկամ արքաների ասեանի
առաջարկութիւնը, նախագահին յայսնելիք
շնորհակալութեան մասին։ Նորերում անսղիական
նշանաւոր լրագիրներից մէկի մէջ կարդացի մի
նամակ բաժնումի հարցի վերաբերմամբ, ուր հե-
ղինակը, ի միջի այլոց արմենօֆի իւ (հայասէր)
է կողում այն անձանց, որոնք համակրում են
հայերին։ Այս բոլորովին նոր բառէ և սա լսել
և կարդացել եմ առարկօֆիների ոռուսօֆիներից
ֆիլէլինների մասին, իսկ արմենօֆիների մասին
երբէք։ Մակայն ես կարծում եմ, որ այս բառը
Ճիշտ արտայայտում է այն անձանց դգացմունքը,
որոնց կարեկցութիւնը հաւաքելէ այստեղ այս

օր որոնք շանկացան պաշտպանել և նորանել
մեր գործին վեհաժողովի մէջ։ Ես հաստատ
յոյս ունիմ, որ արմենօֆի բառով բացադրուած
վեց և ազնիւ զգացմունքը երկարատև կրկնի
և հաստատունք Յս ուրախութեամբ ձայնակցում
եմ մեր յարգելի նախագահին յայտնած շնոր-
հակալութեանը. մեր նախագահին, որ այն-
քան հմտութեամբ կատարեց իւր նախագա-
հական պարտականութիւնները այս մեզ հա-
մար կարեւոր միտինգում։»

Նորհակալութիւնը միաձայն ընդունուեցաւ։
**Նախագահը յետոյ կարգաց հետեւալ հե-
ռագիրը, որ ուղարկել էր Բերլինի հայոց ներ-
կայացուցիչներից մէկը՝ Խորէն արքեպիսկոպոս
Նար-բէյը. «Ցաւում եմ, որ չեմ կարող ներ-
կայանալ Նրուսաղէմեան պալատի միտինգին,
բայց սրտով և հոգով ձեզ հետ կը լինիմ։
Ողջոյն և օրհնութիւն ատենախօսներին և շնոր-
հակալութիւն նոցա։»**

**Նախագահը մի քանի խօսքով պատաս-
խանեց իրան յայտնուած շնորհակալութիւննե-
րին և այնուհետեւ ցրուեցաւ այս միտինգը, որ
մի գեղեցիկ երես կը կազմէ մեր նորագոյն պատ-**

մռւթեան մէջ : Հային և Հայաստանին օտար
ները ոչ միայն խօսքով այլ և գործքով կը հաՅ
մակրեն, եթէ հաստատամոռւթեամբ դիմէնք
մեր նպատակին, որի խսկական ձանապարհն այն
է, որ նախ և առաջ ամէն հայ... արմեւ
և օֆիլ լինի:

Ա Ե Ր Զ : Անուշիսի զամանի զան
առցանցութիւն այսուհետ զան անուշիսի ուղարկութիւնը

ան զանը զարդարութիւն զան անուշիսի
զան զարդարութիւնը ան անուշիսի ուղարկութիւնը

ան զանը զարդարութիւնը ան անուշիսի ուղարկութիւնը

ան զանը ան զան ան անուշիսի ուղարկութիւնը

ան զանը ան զան ան անուշիսի ուղարկութիւնը

ան զանը ան զան ան անուշիսի ուղարկութիւնը

ՀՀ Ազգային գրադարան



NL0257028

